№ 274 ՈՒՐԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15 № 274

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԵԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻԿԱՑ **1907** ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ռ., տասն ամսվանը՝ 9 ռ., ինն ամսվանը՝ 8 ռ., 8 ամսվանը՝ 7 ռ., եօթ և վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ. և մի ամսվանը՝ 1 ռուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՆԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱԳԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲԱՑՎԱԾ Է 1907 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

XXV ԱՂԲԻՒՐ XXV

Մանկական պատկերազարդ ամսագրի

* ԵՒ *

XVIII ՏԱՐԱԶ XVIII

Պատկերազարդ ամսօրեայ ԳԵՂԱՓՇԻԿԻ։

ԱՂԲԻՒՐԸ առաջիկայ 1907 թ. թեւակոխում է իր ՔՍԱՆՀԻՆԳԱՄԵԱԿԸ

Հրաւիրում են նրանք, որոնք գէթ մի օր աշխատակցել, աջակցել են «ԱՂԲԻՒՐԻՆ», յօբելեանական այս տարին էլ մասնակցեն, հանդիսանալով «ԱՂԲԻՒՐԻ» բարգաւաճման նախանձախնդիր։

«ԱՂԲԻՒՐ»-ով են սկսել են իրանց գրական գործունէութիւնը մեր արդի անուանի և հռչակաւոր մատենագիրներից և քանասաեղծներից շատերը, որոնց պատկերները մի յատուկ ալբոմով պիտի հրատարակեն Հոլանդիայում, պարունակելով և այն անձինքների պատկերները, որոնք երբեւիցէ աշխատակցել են «ԱՂԲԻՒՐ»-ին։

Ուստի հրաւիրում են, առանց բացառութեան, ուղարկել մեզ իրանց լուսանկարները, հասցէները, մատնացոյց լինելով թէ որ №-ում, ինչ թւի և ինչ յօդուած ունեն տպագրած «ԱՂԲԻՒՐ»-ում։

Յօբելեանական այս 1907 թ. «ԱՂԲԻՒՐԸ» թէ իր ներքին իմաստով, ճոխ բովանդակութեամբ և թէ արտաքին շքեղութեամբ պիտի գերազանցէ նախորդ բոլոր տարիները։

«ԱՂԲԻՒՐ»-ին խոստացել են իրանց սիրալիր մասնակցութիւնը մեր գրական բոլոր ընտիր ոյժերը։ Մնում է, որ «ԱՂԲԻՒՐ»-ի այսօր հաստատացած հաղարաւոր նախկին ընթերցողները, որոնցից շատ շատերը այսօր կազմում են առանձին-առանձին ընտանիքներ, ծնողներ են և ունեն զաւակներ, յետ նահանջին, յիշին իրան գարուն օրերը ու հայ բոլոր խաւերում մտցնեն «ԱՂԲԻՒՐ»-ը։

Որպէսզի իւրաքանչիւր հայ ընտանիք հնարաւորութիւն ունենայ այս յօբելեանական 1907 թ. «ԱՂԲԻՒՐ» ստանալու, մենք իջեցնում ենք «ՏԱՐԱԶԻ» բաժանորդագինը, որ պիտի հրատարակւի իբրև գեղափնջիկ ամսօրեայ՝ և 10 ռ. փոխարէն «ԱՂԲԻՒՐ» և «ՏԱՐԱԶ» հանդերձ յօբելեանական պրէմիա ալբոմով նշանակում ենք ընդամենը 5 ռ.

(արտասահման 10 ռ.) իւրաքանչիւրն առանձին 3 ռ. (արտասահման 5 ռ.)

Ներկայ 1906 թ. բաժանորդներին իրանց պակաս ստացած №№-ի փոխարէն վճարում են «Աղբիւր»-ի և «Տարազ»-ի համար միմիայն 3 ռ.

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Агбюръ» կամ «Таразъ». (Tiflis, (Caucase) Redaction Agbur կամ «Taraz»).

առ. 2—0

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵԼԻ

Գեղարուեստական երգիծաբանական պատկերազարդ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,

որին աշխատակցում են նկարիչներ՝ պ.պ. Շամշինեան, Զոմմեր, Ճէպէյեան, Ռոդդեւ, «Սլաք», «Սեթեան», «Միֆասոլ» և ուրիշները։

Տարեկան բաժանորդները կը ստանան պրէմիաներ. 1) Երկու մեծադիր (50×60 սանտիմ) գունատիպ պատկեր հայկական կանքից, 2) Պատի տախտակ, պատկերազարդ օրացոյց 1907 թ.

Տարեկան գինը պրեմիաներով Թիֆլիսում՝ 4 ռ., դուրսը՝ 5 ռուբ.։ Կէս տարին՝ 2 ռ. դուրսը՝ 2 ռ. 50 կոպ.։ Երեք ամիսը՝ 1 ռ., դուրսը 1 ռ. 25 կ.։ Արտասահման՝ տարեկան 6 ռուբլի, կէս տարին 3 ռուբլի։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аели», Дворцовая ул. № 3. կամ Tiflis, Rédaction du journal «Haeli».

Դաւառական ընթերցողների յարմարութիւնները ի նկատի ունենալով, «Հայելին» այսուհետև պէտք է լոյս տեսնէ հինգշաբթի օրերը։

Այսօր լոյս կը տեսնի «Հայելիի» յաւելուած № 1։

Խմբագիր-հրատարակիչ՝ Բ. Ճէպէյեան

(ու.) առ. 1—1

ԲԱՑՎԱԾ Է ՆԱՂԴ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1907 Թ.

ԼԱՊԹԱԼԱ

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

Տարեկան գինն է՝	Թիֆլիսում	4 ռ.	Ուրիշ տեղեր՝		5 ռ.։
Կէս տարվայ	» »	2 ռ.	»	»	2 ռ. 50 կ.
3 ամսվայ	» »	1 ռ.	»	»	1 ռ. 25 կ.
1 ամսվայ	» »	— 40 կ.	»	»	— 50 կ.

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ի տարեկան բաժանորդները 1907 թվին, բացի 50 № թերթից ՁՐԻ ստանալու են. 1) գունատիպ ՏԱԽՏԱԿ ՕՐԱՑՈՅՑ, 2) միջադիր խիստ շքեղ պատկեր՝ զանազան գոյներով տպված, 11×8 փերշկի մեծութեամբ, որ ծառայելու է որպէս պատից կախելու ՁԱՐԴ—ՊԱՏԿԵՐ և 3) մի «ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ», մօտ 200 միջադիր երեսներից բաղկացած, ուր մտնելու են եւրոպական և ռուսական նոր երգիծաբանական գրողների լաւագոյն գրուածքներից նմուշներ։

Ընդունում ենք ամեն լեզուներով յայտարարութիւններ։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Хатабала».

Խմբագիր-հրատարակող՝ Ատ. Երիցեան

(ու. կ. ե.) առ. 9—20

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1907 Թ.

ԵՐԿՐԻ ԶԱՅՆԸ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,

որ նուիրուելու է մասնաւորապէս Թիւրքահայկական հարցի լուսաբանութեանը. ծանօթացնելու է իր ընթերցողներին հայ և Թիւրք կեանքի քաղաքական, հասարակական, գրական ու գեղարուեստական զանազան երեւոյթների հետ. պէտք է ձգտի հայ-Թիւրքական համերաշխ գործակցութեան։

ԲԱԺԱՆՈՐԴ ԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԱՅՄԱՆԱԳԻՐԸ

	Տարեկան	Վեց ամսուան
Թիֆլիս	3 ռ. 50 կ.	2 ռ. —
Գաւառ	4 ռ. —	2 ռ. 25 կ.
Ամերիկա	2.50 դոլ.	1,50 դոլ.
Արտասահման	13 ֆր.	7 ֆր.

Խմբագրութեան հասցէն՝—Тифлисъ, редакція «Еркри Дзайнъ», Грибоѣдовская, № 16, д. Зубалова, կամ Tiflis, rédaction de l'«Erkri Dzaïn», Griboedovskaya, № 16, maison Zoubaloff.

Թիֆլիսում կարելի է բաժանորդագրուել և «Գուտենբերգ» գրավաճառանոցում։

ՄԱՍՆԱԳԷՏ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԲԺԻՇԿՆԵՐԻ

ՀԻՄԱՆԴԱՆՈՑ

ԵՐԹԵՒԵԿ ՀԻՄԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մեծ-Վանքի փողոց, № 5, ոչ հեռու Ալէքսանդրեան այգուց.

Վճարն է խորհրդի համար 50 կոպ.

Հեռախօս № 481.

Ընդունելութիւնը առ. ժ. 11—5 ժ. եր.

Բժ. Տ. Ի. ՐՈՒԲԷՆՕ.—Ներքին հիւ. հինգշ., կիր. 3—4 ժամ.

Բժ. Ֆ. Վ. ԶՈՒԲՆՕՎՍԿԻ.—Վիրաբուժ. հի. երկ., ուրբ. 2—3 ժ.

Բժ. Մ. Ի. ԵԱՆԶԷՎՍԿԻ.—Ականջի, քթի և բերանի, չորեքշ., ուրբ., կիր. 2—3 ժ.

Բժ. Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ.—Վիրաբուժ., մկանսեռ. երկ., հինգշ., շաբ. և կիր. 2—3 ժ.

Բժ. Ն. Մ. ԱՍՊԻՍՕՎ.—Քթի, բերանի և ականջի, երկ. երեք. և շաբ. 1—2 ժ., հինգ., կիր., 12—1 ժ.

Բժ. Վ. Դ. ԲՕԺՕՎՍԿԻ.—Ներքին հիվանդով ամենայն օր 4—5 ժ.

Բժ. Ա. Ն. ՏԵՏՐԱՁԷ.—Կաշուի, վեներ. ամենայն օր 1—2 ժ.

Բժ. Վ. Ի. ԻՆԱԵՎ.—Ներքին, 1—2 ժ. երեքշ., չորեքշ., շաբ., կիրակի, կանացի երկուշաբթի, հինգշ., 1—2 ժ., ուրբ. 12—1 ժ.։

Բժ. Ա. Ա. ՄՕՆՄԷ.—Ներքին, երեխ. երեք., հինգ., շաբ. 4—5 ժ.

Բժ. Ա. Տ. ԲՕԶՄԱԻՍԿԻ.—Երեխ., չորեքշ., շաբ 11—12 ժ. երկ., ուրբ. 1—2 ժ.

Բժ. Ն. Ի. ՆԷՌԻՑՄԻՆ.—Աչքի, երկ., երեք., չոր., ուրբ., շաբ., 11—12 ժ.

Բժ. Ա. Ա. ՆՕՎԻՑԿԻ.—Կանանց, երեխ., չոր., կիր. 12—1 ժ., երեք., ուրբ. 1—2 ժ.

Բժ. Զ. Ֆ. ՆԵՎԶՕՐՕՎ.—Ատամի հիւ. 11—1 ժ. ամենայն օր.

Բժ. Կ. Մ. ԳԻՎԱՐՍԿԻ
Բժ. Կ. Ի. ԶՈՒԲՆՕՎՍԿԻ } Կլինիքական անալիզ

Բժ. Գ. Ի. ՕՆՕՇԿՕ.—Բժշկ. գիմ. մասաժ, երեքշ. 4—6 ժամ.

Մ. Ե. ԳՕՐՕԳՅՕՎԱ.—Մասաժ. 11—4. ժ.

Ս. ԵԱ. ՊԱՒԼՕՑԿԻ.—Վիրաբ. 12—1 ժ. ամենայն օր, կիրակի օրը 4—5 ժ.

Վ. Ի. ԻՆԱԵՎ.—Ներքին, 11—1 ժ. երկ., երեք., չորեքշ., ուրբ., կանանց 1—2 ժ. հինգշ., շաբաթ., կիրակի։

Բժշկական խորհուրդներ, մասաժ, սրսկել, անդամահատել, անալիզի ենթարկել, հիպնոզել, ատամների և ծառաների քննելը—ըստ համաձայնութեան։

առ. (ա. օ.) 24—144

ԿՈՉ

Ղարաբաղի սովեալների օգտին դեկտեմբերի 26-ին տրվելիք երեկոյթի նախաձեռնողները խնդրում են հասարակութեանը և խանութպատերերին, որ չը զլանան նուիրաբերելու նոյն երեկոյթում սարքվելիք վիճակախաղի համար զանազան ձեռագործներ և այլն։ Նուիրաբերողների անունները և ամբողջ հաշիւը կը տպագրվի. նուէրները ընդունվում են բժ. Մ. Մուրադեանի մտ., Սօլօլակ, Բարիշեվսկի փողոց տ. № 1, Ե. Ծատուրեանի խանութում Դվորցովայա փողոցում, պ. Ս. Եղիազարովի մօտ Վելիկոկնեժէսկայա տ. № 40. և Գ. Զիլինգարեանի խանութում, Արմենսկի բազար։

առ. 2—2

Հողագործութեան մէջ նոյն այդ գործողութիւնը կատարվում է շատ դանդաղ, իսկ որոշ գիւղատնտեսական ճիւղերում նա նոյն իսկ բոլորովին տեղի չունի և յամառ կերպով մաքառում է այն ընդհանուր կանոնի դէմ, որ իշխում է տեխնիկայի մէջ։

XII

Իսկ ինչ ենք մենք նկատում մեր գիւղական իրականութեան մէջ։

Մի ուժեղ շարժում դէպի համայնական հողատիրութիւն։

Գիւղացիութեան փափագն է տեսնել հողը արդար բաժանված շնչի հաշուով մի չէ նոր բաժանում կատարելը։ Այդ փափագի իրագործութեան խանգարող են հանգիստում գիւղերում այն հարուստ տները, որոնք որևէ ձևով իրանց ձեռքն են գցել մեծ հողաբաժիններ։ Իսկ գիւղական ընդհանրութիւնը, գիւղական խղճը թելադրում են հողը չը դարձնել մենաշնորհութեան առարկայ և դնել նրան համայնքի տրամադրութեան տակ։

Անշուշտ իւրաքանչիւր գիւղացի ցանկանում է իր աշխատանքի տերը լինել և հեշտութեամբ չի զիջի իր բարուրված և պարարտացրած հողը ուրիշին, բայց ահա հէնց այդտեղ էլ առաջ է գալիս այն հարցը, որ մենք մի քանի անգամ ընդգծել ենք, այն է՝ բարեփոխելու համայնական հողատիրութեան կարգերն ու կանոնները, որպէս զի գիւղացիները կարող լինեն կանոնաւոր կերպով շահագործել իրանց հողերը և վարել տնտեսութիւնը։

XIII

Մեր երկրում կան նոյնպէս շատ գիւղեր, որոնք չունեն հողային համայնք։ Եւ ուրեմն սօցիալական փորձերի և դիտողութիւնների համար մենք ունենք զանազան նմուշներ։

Իսկ որպէսզի մենք ձեռնամուխ լինենք ոչնչացնելու եղած համայնքները և գիւղացիներին դարձնելու մանր մասնաւոր սեփականատէրեր, անհրաժեշտ է, որ այդ պատասխանատու վճիռը արձակենք յամենայն դէպս լաւ կշռելով թեր ու դէմ առարկութիւնները, ուսումնասիրելով իրականութիւնը և որոշ ատիճան հաշուի առնելով գիւղացիութեան հայեցակէտը։

Գիւղացիութեան գլխին առհասարակ շատ խաղեր են խաղացվել պատմութեան մէջ, և նրա բաղդը պետական մարդիկ տնօրինել են իրանց ցանկութեան համեմատ։ Նոյնն էլ այժմ է անվում Ստոլիպինի օրով։

Գոնէ փորձէին հարցնել գիւղացուց, թէ նա ինքը ի՞նչպէս է նայում իր հողային համայնքի վրա և արդեօք համայնքի մէջն է նա տեսնում իր գժբաղդութիւնը, նրա կազմալուծումն մէջն է նա որոնում իր առաջիկայ զարգացման գլուխկանը։

Գիւղացու կարծիքը չը ցանկացան իմանալ հիւսիսում։

Գոնէ մենք հարցնէինք մեր գիւղացուն, լսէինք նրան, կշռէինք նրա առարկութիւնները և յետոյ թէկուզ որոշէինք կազմալուծել նրա սիրած համայնքը, համարելով համայնքի գաղափարը իբրև աւանդապահութեան մի թուլութիւն։

XIV

Մենք նուիրել ենք հողային համայնքին շատ յօդուածներ և այժմ էլ մանրամասնօրէն կանգ առանք նրա վրա այն պատճառով, որ հողային համայնքը միայն տեսական մի հարց չէ, այլ և մեր իրականութեան արտայայտութիւններից մէկն է. նա բէլ երևոյթ է, որի վերաբերութեամբ մենք յաճախ ստիպված ենք լինելու կարծիքներ և խորհրդածութիւններ յայտնել։

Ահա վաղը միւս օր ձեզ պէտք է դիմեն գիւղացիներ հողի նոր դասաւորութիւնների մասին հարցափորձերով, պէտք է հարցնեն ձեր կարծիքը հողաբաժանութեան այս ու այն ձևի մասին։

Մեզ համար դրանք յիրաւի կենսական խնդիրներ են, հետաքրքրական և արժանի կատարեալ ուշադրութեան։ Իսկ ով վճռել է այդ ամբողջ գործը համարել միայն իբրև մի տխուր Ցացոդ մոայլ և խաւար անցեալի, նրան Ցուում է միշտ և հանապազ կրկնել, թէ պէտք է կործանել կարթագինէն, պէտք է ոչնչացնել համայնքը։

Մենք յայտնեցինք մեր կարծիքը և ընտեցինք հանդէս բերված առարկութիւնները։

Առ այժմ այսքան։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Ինչպէս արդէն հաղորդեցինք, Թիֆլիսի Կենտրոնական Նպաստամատոյց Ցանձնաժողովը մի պատգամաւորութիւն է ուղարկում Ռուսաստանի զանազան հայաբնակ քաղաքները ժողովարարութիւն անելու ի նպաստ հայ տառապեալների։ Վեհափառ Կաթողիկոսի կողմից կօնդակով նշանակված է այդ պատգամաւորութեան նախագահ արժ. Յուսիկ վարդապետը։ Նպաստամատոյց Ցանձնաժողովը ամսոյս 12-ին կայացած իր նիստում, որին նախագահում էր Գարեգին արքեպիսկոպոսը և որին մասնակցում էին անդամներ պ.պ. Ալ. Մելիք-Ազարեան, Ալ. Քալանթար, բժշ. Կ. Ստեփանեան, Աւ. Անարոնեան, Աւ. Սահակեան, Յ. Սպէնդիարեան, Աւ. Արասխանեան, Հ. Առաքելեան և Մ. Յարութիւնեան,—իր կողմից պատգամաւորութեան անդամներ ընտրեց պ.պ. Աւ. Արասխանեանին և Հ. Առաքելեանին։ Այդ 3 հոգ. բաղկացած պատգամաւորութիւնը այսօրերս ճանապարհվում է Բագու, ուր նրան պէտք է միանայ և Բագուի Նպաստամատոյց մանաժողովի մի ներկայացուցիչը։

—

Մանչեստրից հաղորդում են, որ մի քանի հայ դրամատէրեր կազմել են մի բանկային տուն, առևտրական գործերի համար։ Այդ բանկը պէտք է ունենայ 500,000 ֆունտ ստերլինգ դրամագլուխ, որի կէսը պէտք է վճարեն բաժնետէրերը իսկոյն, իսկ մնացեալ մասը՝ երբ անհրաժեշտութիւն ներկայանայ։

Այդ բանկի հիմնադիրներն են ռուսահայ և Թիւրքահայ հարուստներ, ինչպէս՝ Մանթաշեան, Պօղոս փաշա Նուպար, Եսայեան, Ժամհարեան եղբ., Սպարթալեան, Սարգիս Գուլումճեանց և ուրիշներ։

Իւրաքանչիւր ակցիայի, բաժինի, գին է նշանակված 100 ստերլինգ։ Այդ հաստատութեան անունը պէտք է լինի Commercial Bank of Manchester (Առևտրական Բանկ Մանչեստրի)։ Բանկի վարիչները պէտք է լինեն անգլիացի։ Գլխաւոր բաժնետէրն է Մանթաշեան։ Այդ հաստատութիւնը, որի կազմակերպութեանը աշխատում էին երեք ամսից է վեր, արդէն վերջնականապէս հիմնված կարելի է համարել։ Կէս միլիոն դրամագլխի կէսը արդէն ստորագրված է։ Ցոյս են յայտնում, որ երբ բաժնեթղթերը հրապարակ հանվեն, աջողութեամբ ստորագրվեն։

Ահա առաջին ստորագրվողները՝

Ա. Մանթաշեան	80,000	ստեր ինգ
Պօղոս փաշա Նուպար	40,000	»
Ժամհար. եղբ. (Մոսկ.)	40,000	»
Ս. Գուլումճեան	20,000	»
Ալեանաքեան (Մանչեստրը, Մ. Թօգատեան բանկային տան յաջորդ)	20,000	»
Գ. Թօփալեան	20,000	»
Սպարթալեան	5000	»
Եսայեան (Իզմիր)	5000	»
Ուրիշներ	20,000	»
	250,000	ստերլինգ

Այս դրամատունը, համաձայն անգլիական օրէնքի, հաստատված որպէս անգլիական բանկ, պէտք է կատա է սովորական բանկային գործառութիւններ։ Պիտի ունենայ, ի հարկէ, աւելի հայկական առևտրական տների հետ գործառնութիւններ։ Պիտի ունենայ մասնաճիւղեր կամ թղթակիցներ Լէնդոնում, Պարիզում, Մոսկվայում, Թիֆլիսում, Բագուում և այլն։ Դեռ չէ որոշված, թէ ե՞րբ են հրապարակ հանվում բաժնեթղթերը։

—

Շուշի, դեկտեմբերի 11-ին

Գեն. Թալիշինսկի՝ Գանձակի նահանգի գեն.-նահանգապետութեան օրոք, Շուշի ուղարկվող գօրքերը, Շուշի-Եւլախեան տրակտի վրա, յաճախ ընդհարվում էին թուրքերի հետ Աղդամի մօտերը։ Ընդհարվող և ապստամբվող թուրքերի պարագուխները, որոնց իշխանութիւնն երանդուն կերպով որոնում էր, մինչև օրս փախուստի էին դիմել և չէին երևում։ Սակայն վերջերս, կառավարութեան ձեռք առած կտրուկ միջոցների շնորհիւ, գտնվեցին, և ամիս 7-ի գիշերը, լոյս առաւօտեան, մօտ 30 հոգի, կոզակ պահակի ուղեկցութեամբ, Շուշու բանտը բերվեցին։ Թուրքերից երկու հոգի հէնց նոյն օրը բանտային հիւանդանոցում վախճանվում են...

—

Շուշի, 11 դեկտեմբերի

Քաղաքիս հայ ազգաբնակութեանը բաժնվում են 49 տների անուն և ազգանուն բովանդակող թերթեր, որպիսի անձերը առաջարկված են իբրև թեկնածուներ և որոնցից ձայների բազմութեամբ պիտի ընտրվեն 15 լիազօրներ տեղիս ինքնապաշտպանութեան գործը ղեկավարելու համար։

Դաշնակցութեան տեղական մարմինը, ինչպէս լսեցինք, այդ սոսկ ժողովրդական-հասարակական գործը այսուհետ յանձնում է ժողովրդի ձեռքը՝ ապագայում որևէ պատասխանատուութիւնից իրան ազատ պահելու համար։ Շատ ուրախ ենք։

Սակայն, որպէսզի ապագայում ևս օրինազանցութիւններ երևան չը գային և հետևաբար Թիւրքմացութիւնների ու բողոքների տեղիք չը տային, անպայման անհրաժեշտ է, որ տեղական հայ ազ-

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵԼԻ

Գեղարուեստական երգիծաբանական պատկերազարդ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ,

որին աշխատակցում են նկարիչներ՝ պ.պ. Շամշինեան, Զոմմեր, Ճէպէյեան, Ռոդդեւ, «Սլաք», «Սեթեան», «Միֆասոլ» և ուրիշները։

Տարեկան բաժանորդները կը ստանան պրէմիաներ. 1) Երկու մեծադիր (50×60 սանտիմ) գունատիպ պատկեր հայկական կանքից, 2) Պատի տախտակ, պատկերազարդ օրացոյց 1907 թ.

Տարեկան գինը պրեմիաներով Թիֆլիսում՝ 4 ռ., դուրսը՝ 5 ռուբ.։ Կէս տարին՝ 2 ռ. դուրսը՝ 2 ռ. 50 կոպ.։ Երեք ամիսը՝ 1 ռ., դուրսը 1 ռ. 25 կ.։ Արտասահման՝ տարեկան 6 ռուբլի, կէս տարին 3 ռուբլի։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аели», Дворцовая ул. № 3. կամ Tiflis, Rédaction du journal «Haeli».

Դաւառական ընթերցողների յարմարութիւնները ի նկատի ունենալով, «Հայելին» այսուհետև պէտք է լոյս տեսնէ հինգշաբթի օրերը։

Այսօր լոյս կը տեսնի «Հայելիի» յաւելուած № 1։

Խմբագիր-հրատարակիչ՝ Բ. Ճէպէյեան

(ու.) առ. 1—1

ԲԺԻՇԿ

Տ. Ա. Իսահակեան

ՄԱՍՆԱԳԷՏ՝

ներքին եւ վեներական

հիւանդութիւնների

Ընդունելութիւն { առաւօտ. 10—12 ժ. / երեկոյեան 5—7 ժ.

Սօլօլակ, Սերգիևսկայա 15, Փրիդոնովի տանը։

առ. (չ.ու.չ.) 20—100

ԲՈՒՓԻՉ ԿԷՖԻՐ

ԲԱԲԱԼՕՎԻ

Վաճառվում է Կովկասի օֆիցերների էկոնոմիական ընկ. մագազիններում և Իւղաշէֆի (Երևանեան հրա պարակ) և Ալիխանովի (Վօրոնցովի արձանի դիմաց) քաղցրավաճառանոցներում։

առ. կ. ե. ու. 8—10

դարնակութիւնը դիւակցօրէն վերաբերվէ լիազօրների ընարութեանը և աշխատէ ընտրել այնպիսի բարեխիղճ, բանիմաց և ժողովրդի շահերով տոգորված անձեր, որոնք կարողանան ձեռնհաս և ընդունակ լինել դեկավարելու ինքնապաշտպանութեան պատասխանատու գործը։

Առաջարկված թեկնածուների ցանկի մէջ կան քաղաքական տարբեր դաւանանքներ ունեցող անձեր։

Մենք հակառակ չենք, որ այդ թեկնածուներից ընտրված լիազօրների շարքում գտնվեն այս և այն քաղաքական դաւանանքի և ուղղութեան պատկանող անձեր։ Սակայն, այդ հանգամանքը չը պէտք է առիթ ներկայանալ լիազօրներին դեկավարելու ընդհանուր ժողովրդական մի գործ այս և այն համոզումներով, թայֆայական գծուծ ոգով, քանի որ այդ դէպքում, անկասկած, երևան կարող է գալ այնպիսի մի սոսկալի քաօսային զրութիւն, որից ամեն կերպ կարող են տուժել թէ գործը և թէ տեղական հայ ժողովուրդը։

Անպայման՝ այդ սկզբունքն է պահանջում ինքնապաշտպանութեան լուրջ գործը, այդ են պահանջում ժողովրդի շահերը։

X

—

Շուշի, դեկտեմբերի 11-ին

Գեն.-Նահանգապետ Բաուէր ամենակարուկ կերպով պահանջում է 12,000 ր. տուգանքը յօդուտ 4 սպանված ռուս զինուորների ընտանիքների։ Նա ժամանակամիջոց է դրել մինչև դեկտեմբերի 15-ը, առաւօտեան 12 ժամը։ Եթէ ժամանակամիջոցը լրանալուց այդ փողը չը ստացվի, այն ժամանակ ամբողջ մի շաբաթ տեղական բոլոր զօրքը պահվելու է հայ և թուրք հասարակութեան հաշուով, իսկ եթէ մինչ այդ ժամանակամիջոցը չը վճարվի, այնուհետև զօրքը բաժանվելու է ընտանիքների վրա և քաղաքացիների հաշուով պահվելը տևելու է այնքան ժամանակ, մինչև որ այդ տուգանքը կը վճարվի։

Մենք տպված ենք այդ առիթով մի անգամ ևս յիշեցնել ընթերցողին, որ ժողովուրդը մինչ յեսին ծայր աղքատացած է և անկարող է այդպիսի մի խոշոր տուգանք, այն էլ կարճ ժամանակով ընթացքում, վճարել։ Ժողովրդի բուռն աղաղակներին ու պաղատանքներին՝ չը վերցնել տուգանքը՝ ոչ մի զոհացում չը տրվեց Բաուէրի կողմից...

Ժողովրդի ներկայացուցիչներից մի քանիսը, այդ առիթով Բաուէրի հետ խօսելիս, նկատել են. «Ապա, մեր սպանվածների օգտին Երբ պէտք է նպաստ ստանանք գանձարանից»։—«Դուք առայժմ վճարեցէք այդ փողը, իսկ այնուհետև դրա համար միջնորդեցէք ուր հարկն է», եղել է պատասխանը զեներալի կողմից։

Հայ հասարակութեան ներկայացուցիչները խնդրեցին Բաուէրից նաև, որ բեկանէ իր վճիռը աքսորված հայ քահանաների վերաբերմամբ և վերադարձնել տայ նրանց առաջնակարգ տօներին, բայց դարձեալ մերժել է, ասելով. «Իմ վճիռը վճիռ է. աջ ձեռով գրածս, ձախով չեմ ջնջի։ Կայ Կայսր և Փոխարքայ, կարող էք նրանց առաջ միջնորդել... Շուշում քահանաներ շատ կան՝ կը բաւեն տօներին...»։

Ուրիշ խօսքով «Զոր ինչ գրեցաւ գրեցաւ»։

—

Երևան.—Սուրմալուի դաւառում սահմանապահ զինուորներ Գրօզ, Պլատօնով և Մինեակ, գտնվելով գաղտնոցում (секретъ), գիշերը նկատել են 15 հոգու, որոնք գնալիս են եղել դէպի սահմանը. զինուորները անհամներին 2 անգամ ձայն են տուել, բայց, նկատելով որ նրանք փախչում են, համաձայն են արձակել, որից սպանվել են Դաւուրսախան գիւղի բնակիչներ Աբդուլ Քերբալայ Մասում-օղլին և Զէյնաբ Հաջի Կուլի-ղզի։ Սպանվածների մօտ գտել են 4 տոպրակ մաքսանենգ ապրանք։ Իլիսի Կիրուզի գիւղում Մամեդ Քերբալայ Բաւթալի-օղլու մօտ ատիկանութիւնը գտել է 2 մէշոկ մաքսանենգ թէյ, 4 պուդ 30 գր.։ Մեղադրվողը ձերբակալված է։ («Т. Л.»)

—

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

III

Պ. Ճանֆիկեանի զեկուցումից երևաց՝ առաջին, որ մայիսի 23-ին և յունիսի 8-ին ընդհանուր ժողովների վճռի համաձայն օգնութիւն պիտի հասցնէր Նպաստամատոյց Ցանձնաժողովի միջոցով դրամով, բայց պ. Թոլուխանեանի նախաձեռնութեամբ դրամական օգնութիւնը փոխարինվել է հացի մատակարարութեան և Նպաստամատոյց Ցանձնաժողովին տեղիս Մասնաժողովի արձանագրութիւնների պատճէները ուղարկելուց զկնի՝ ուղարկված է նորից մի նամակ օգոստոսի 16-ին, որով յայտնված է, թէ Բագուն մտադիր է տալ առ այժմ 50,000 պ. իր առած հացը և մօտ 15,000 պուդ Նուիրաբերելէ։ Ցանձնաժողովը, չը բաւականանալով այդ պատասխանից, նորից հարցապնդում է անում, թէ Բագուն ինչ քան օգնութիւն կարող է հասցնել փողով կամ հացով։ Պատասխանվում է. «Առնված է 50,000 պուդ, նուիրաբերված է 15,000, մեզ անհրաժեշտ է ունենալ 10,000 ր. և ճանապարհածախսը Արմաւիրից մինչ ցորեն հասցնելու կէտերը»։ Օգոստոսի վերջին կարգադրութիւն է լինում՝ չը ձեռնարկել ոչ մի բանի, մինչև Նպաստամատոյց Ցանձնաժողովից նամակ ստանալը կամ նրա կողմից լիազօր գալը։ Ներկայացուցիչ է ուղարկվում Թիֆլիսից պ. Հ. Առաքելեանը, որը այստեղի Մասնաժողովի սեպտեմբերի 11-ի նիստում մանրամասնօրէն ծանօթացնում է իրանց հաւաքած տեղեկութիւնների հետ։ Պ. Առաքելեանի ասելով, Ցանձնաժողովը գտել է, որ հարկաւոր է 204,000 պ. հաց, չը հաշուելով Զանգեզուրի կարիքը, ուստեղ և ցանելու, իսկ քայքայված տնտեսութիւնը վերականգնելու, արհեստագործական գործոցների բացման և մի քանի գիւղական հայ համայնքների՝ թուրքերի մէջից հայերի մէջ տեղափոխելու և հետևաբար այդ նպատակով հողեր ձեռք բերելու համար անհրաժեշտ է ունենալ առ նուազն 300—350,000 ռուբ. (թէպէտ կէս միլիոնից աւելի է ամենաանհրաժեշտ կարիքը), ուստի առաջարկում է չը բաւականանալ այդ 65,000 պ. հացի մատակարարութեամբ, այլ շարունակել ժողովարարութիւնը, և որովհետև, Ցանձնաժողովի որոշման համաձայն, մտադրութիւն կայ մի երկու պատգամաւոր ուղարկել զանազան քաղաքներ ժողովարարութեան, այդ իսկ պատճառով առաջարկում է մի մարդ ընտրել Բաքուից, որ Ցանձնաժողովի պատգամաւորների հետ հանգանակութեան դուրս գայ։

Մասնաժողովը պատասխանում է. «Թող Թիֆլիսը ընտրէ իր պատգամաւորներին և իմացնէ մեզ, մենք էլ այնուհետև կընտրենք, իսկ մինչև այդ, առած ցորենը տեղ հասցնելու համար, մեզ անհրաժեշտ է մոտաել ճանապարհածախսի համար, որը մենք այժմ և եթ տալ չենք կարող, քանի որ մեր առած հացի համար այժմ պատասխան գումար չունենք»։ Պ. Առաքելեանը խոստանում է տալ 10,000 ռուբլի ճանապարհածախսի համար։

Երկրորդ, որ հացը առած և պատրաստ է եղել դեռ սեպտեմբերի սկզբներին, բայց հնարաւորութիւն չէ եղել տեղ հասցնելու, որովհետև երկաթուղու վարչութիւնը հերթից դուրս վագոններ չէր տալիս, իսկ մեզ հերթ կը հասնէր միմիայն փետրվարին։ Այդ մասին դիմում եղաւ ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեանը Փոխարքայի միջոցով և հոկտեմբերի 18-ին միայն ստացվեց կարգադրութիւն՝ տալ արտակարգ վագոններ 50,000 պուդ հանապարհելու միմիայն Ղանձակի նահանգը. իսկ Արմաւիրի երկաթուղու վարչութիւնը իր կողմից ճանապարհում էր միմիայն Եւլախ կայարանը և ուրիշ ոչ մի կայարան։ Այսպիսով նոյեմբերի 19-ին և 24-ին ուղարկվում է Եւլախ մինչև մայիսից 41 վագոն, և շատ պարզ է, որ արտօնեալ ժամանակի ընթացքում ոչ մի հնարաւորութիւն չը կար այդքան հացը ընդունելու և դատարկելու վագոններից, պահեստի և բանուոր ձեռքի բացակայութեան պատճառով, և այդքան հացը մի շաբաթից աւելի կանգնած է եղել կայարանում, մինչև մենք կը կարողանայինք ճանապարհածախսը, մօտ 10,000 ր., փոխադրել Թիֆլիս, մտցնելու երկաթուղիների վարչութեան կայարանը, կը պայմանագրվէինք «Надежда» ընկերութեան հետ՝ հացը նրա հովանաւորութեան տակ ընդունելու, պահեստ վարձելու և այլ գործողութիւններ կատարելու. ուստի ստիպված էինք վճարել տուգանք 3230 ր. 87 կ., արտօնեալ ժամանակից աւելի հացը կայարանում պահելու համար։ Թէպէտ մենք միջնորդութիւն էինք յարուցել պ. Պ. Ղուկասեանի միջոցով Պետերբուրգում՝ տուգանքը վերացնելու մասին, բայց նա պատասխանել էր, թէ պէտք է դիմել Անդրկովկասեան երկաթուղիների պետին Թիֆլիսում (Начальнику дороги), որ կը նայէ մեր միջնորդութիւնը զանազան նախարարութիւնների ներկայացուցիչների հետ և հաւանականաբար կը յարգէ մեր խնդիրը։ Թիֆլիսի Ցանձնաժողովը մեր նամակի համաձայն դիմել էր երկաթուղիների պետին, և մի 10 օր առաջ տեղեկութիւն ստացանք, որ տուգանքի 2/3 մասը վերադարձվում է. իսկ 1/3-ը պահվում։ Շուտով կը ստացվի պ. Լ. Ղուլիանի միջոցով 2256 ր. 41 կ.։

Ժողովականներից մէկը հարց բարձրացրեց, թէ մի՞թէ չը կան այլ պատճառներ ի զուր տեղը այդքան մեծ տուգանք վճարելու մասին, ապա ինչու՞ համար երկար ժամանակ Թիֆլիսի Ցանձնաժողովը չէր փոխադրում ճանապարհածախսը, քանի որ խոստացել էր։

Պ. Թոլուխանեան.—Թէպէտ Թիֆլիսի յանձնաժողովը խոստացել էր ճանապարհածախսը տալ, բայց, գրաւ չունենալու պատճառով, չէր կարող տալ. բայց եթէ կարողանար անգամ տալ, դարձեալ մենք ստիպված պիտի լինէինք տուգանք վճարել, որովհետև, արդէն ղեկուցված պատճառներով, արտօնեալ ժամանակամիջոցում հնար չը պիտի ունենայինք դատարկել և դուրս բերել հացը կայարանից։

Պ. Սաղեան.—Մասնաժողովը չէ՞ը կարող տեղեկութիւններ տալ, թէ ինչքան է ուղարկված հացից տեղ հասել, ինչպէս է կատարվում հացի բաշխումը վնասված տեղերում։

Պ. Ճանֆիկեան.—Հասել է Գանձակ 2 վագոն. Ղափան—1, Խանքենդ—6, Շուշի—3. Հացածների մասին դեռ տեղեկութիւն չէ ստացված։ Իսկ բաշխումը մենք թողել ենք Թիֆլիսի Ցանձնաժողովի ներկայացուցիչներին տեղական մասնաժողովների հետ միասին. միայն բաշխման ձևի մասին հետևեալ որոշումն ենք արել և այստեղից առաջարկել գաւառներին։ Այն է՝ հացը ձրիապէս տալ չունևորներին, միայն պարտքի ձևով, իսկ ունևորներին ծախել դրամով, բայց այնպիսի գնով, որ հնարաւոր լինի շուկայում հացի գինը միշտ ցածր վիճակի մէջ պահել, իսկ այդ ճանապարհով ձեռք բերած դումարները շարունակ շրջանառութեան մէջ դցել, նորից հաց առնել և ուղարկել այդտեղերը ծախելու մինչև առջիկայ հունձը։

Պ. Թադիանոսեան.—Ինչպէս երևում է, մասնաժողովը, կազմակերպական տեսակէտից, թերութիւններ ունի. ամեն բան լաւ է միայն այն դէպքում, եթէ միայն իր ժամանակին կատարվում։ Եթէ այսօր ժողովուրդը քաղցած է և եթէ մենք այսօր և եթ հաց հասցրինք, այդ կը լինի արդէն շատ մեծ գործ, թէկուզ մեր հացացած հացի պուդը նստէր մեզ 3 ռուբլի, 2-ի փոխարէն, կամ աւելի։ Ուստի ես առաջարկում եմ ունենալ մի քանի հմուտ և փորձառու մարդիկ՝ ցորենը ժամանակին ճանապարհելու և կանոնաւոր կերպով բաշխման համար։

Ժողովը ընդունեց այդ առաջարկութիւնը։

Ներկայացրած հաշիւները հաստատված և ընդունված համարելու համար որոշվեց վերաստեղծել մասնաժողովի յանձնել, որի անդամներ ընտրվեցին պ. պ. Բաղդասարեան, Դիլմաներան և Պօղոսեան։

IV

Նախագահը առաջարկեց ժողովի հայեցողութեանը Նպաստամատոյց Մասնաժողովի և Կուլտուրական ընկերութեան միանալու խնդիրը սովալներին օգնելու գործում։

Պ. Թոլուխանեան.—Կուլտուրական ընկերութիւնը առաջարկել է անցեալ շաբաթ միանալ այս գործում և միասին գործել. ես պատասխանել եմ, թէ ուրախ եմ և ոչինչ դէմ չունեմ, միայն չը գիտեմ ինչ կասէ ընդհանուր ժողովը, ուստի առաջարկում եմ այս հարցը ձեր հայեցողութեան։

Այս առիթով պ. պ. Նարիման, Բաղդասեան և Տէր-Դանիէլեան իրանց երկար ու բարակ բացատրութիւնների մէջ պարզաբանեցին, որ Կուլտուրական ընկերութիւնը ձգտում է ձևակերպվել մի քաղաքական որոշ կուսակցութեան և ձգտելու է պայքար մղել մինչև անգամ Պետական Դումայի համար, ուրեմն պիտի կազմէ ապագայում մի որոշ կուսակցութիւն, որի մէջ պիտի մտնեն որոշ դաւանութեան անձինք, իսկ պ. Թոլուխանեանի և Նպաստամատոյց Մասնաժողովի ձեռնարկածը լոկ մի բարեգործական գործ է, իսկ այդ գործում մասնակցել են և կարող են մասնակցել ամեն գոյնի, ամեն սեռի և ամեն դաւանանքի մարդիկ։ Ուստի թէ անկարելի և թէ անմիտ կը լինէր բարեկործութեան անունով տրված վողը միացնել կամ խառնել քաղաքական մի որևէ կուսակցութեան փողերի հետ, վախենալով մի գուցէ քաղցածների արտասուքները սրբելու համար տրված կօպէկները գործադրվէին քաղաքական որոշ նպատակներով. իսկ աւելի հաստատելու համար իրանց ասածները և ընդորշելու համար Կուլտուրական ընկերութեան ինչ լինելը, քննադատեցին Կուլտուրական ընկերութեան կանոնադրութեան մի քանի յօդուածները։

Պ. պ. Սաղեան և Թաղիանոսեան.—Չէ՞ կարելի միացնել մի քանակութիւն կամ մեծութիւն, որը որոշէ, մի անորոշ մեծութեան կամ քանակութեան հետ, որովհետև չը գտնվեց ժողովում մէկը (պ. Խատիսեան հրաժարվեց այդ մասին խօսելու, առարկելով թէ լիազօրութիւն չունէ Կուլտուրական ընկեր. կողմից), որ կարողանար բացատրել Կուլտուրական ընկերութեան ինչ լինելը կամ որոշ մեծութիւնը. այս հիման վրա չէ կարելի միացնել որոշ քանակութիւնը անորոշ քանակութեան հետ, և հետևաբար պէտք է այդ հարցը ներքից հանել։

Ժողովը ձայների բազմութեամբ, համարեա միաձայն, վճռեց միացման հարցը միանգամայն փակված համարել և այդպիսի հարց չը բարձրացնել։

Պ. Հ. Տէր-Միքայէլեան.—Եթէ բոլորովին ինձ համար, իբրև Նպաստամատոյց Մասնաժողովի անդամ, վիրաւորական չեմ համարիլ, եթէ ասեմ, որ այս բոլոր հանգանակութիւնները, մատակարարումը պէտք է վերագրել միմիայն պ. Թոլուխանեանին, թէպէտ խօսվում է յաջողն Նպաստամատոյց Մասնաժողովի. բայց մենք Նպաստամատոյց Մասնաժողովի անդամներս ոչինչ չենք արել, ուստի առաջարկում եմ յայտնել խորին շնորհակալութիւնները միմիայն պ. Թոլուխանեանին։

Ժողովը յուսակայս, բուռն ծափահարութիւններով շնորհակալութիւն յայտնեց պ. Թոլուխանեանին։

Ապա վճռվեց դրաւոր շնորհակալութիւն յայտնել եղբարց Ղուկասեաններին առատաձեռնութեան և պ. Պ. Ղուկասեանին Պետերբուրգում մեզ համար կրած նեղութիւնների համար։

Մովսէս

—

ԳԱՆԶԱԿԻ ՇՐՋԱՆԻՑ

—

Դեկտեմբերի 10-ի

Զագամի շրջանի դաշտային մասում ապրող թուրք հասարակ դասակարգը վերին ատիճանի չքաւոր կացութեան մէջ է գտնվում. Թուրք-հայկական ընդհարումները և ինքնապաշտպանութեան համար ծախսված գումարները թուրք բնակիչների համար անտանելի բեռն են դարձել։

Ինչպէս իմացայ, ռազմամթերքը, մանաւանդ դէնքերը, նրանք գնելիս են եղել առասպելական գներով. բերդանի փամփուշտը հատը 50 կօպ., մօսինի հրացանը 300 ռուբլով։ Այս տեղեկութիւնները ինձ տուել մի անկեղծ խօսող թուրք։

Մարտահարթում ապրող թուրք ժողովրդի դրութիւնը համեմատական չափով աւելի վատթար է։ Նա ուղղակի սովի է մատնվված, Զուտենալով ձեռնհաս անձինք Ռուսաստից հացատարի ներս մուծող թուրքերից, հացատարիկի զինը համեմատական հաշուով հայերից շատ թանգ է նստում նրանց վրա։

Մի քանի գիւղացիներ և նրանց մէջ հեղինակաւոր անձեր ամեն տեսակ երաշխաւորութիւն յանձն են առնում, եթէ հայերը նորից վերսկսեն Թովուզի, Դալեարի և Զագամի կայարաններում իրանց առևտուրը. սակայն («Զալ օձից կծածը չալ չաթուից կը վախի») հայերը չեն վստահանում։

Զագամ կայարանից երկու վագոն ցորեն պէտք է ուղարկվէր Բաղաձոր. Թուրք գիւղացիք ամենայն ուրախութեամբ խոստացան փոխադրութեան վարձ։ Թուրքերը պատրաստ էին 10 կօպէկով փոխադրելու, բայց ուղարկողը անծանօթ մարդ լինելով չը վստահացաւ տեղափոխութիւնը թուրքերին յանձնելու։

Նայողի վրա այս շրջանի թուրքերը կամաստ ճորտերի տպաւորութիւն են թողնում, և սխալ չէ այն կարծիքը, որ սրանցից ամեն մէկը կայր գործիք է ծառայել ամենակարող բէկերի ձեռքին, որոնց թիւը այնքան բազմաթիւ է։

Անշուշտ թուրք Նպաստամատոյց Ցանձնաժողովը, որ կազմվել է Բաքումում, իր նպաստով մեծ բարերարութիւն արած կը լինի թուրք քայքայված գիւղացիներին, որոնց կացութիւնը հայերինից վատթար է, որը առաջ է եկել ոչ թէ հայերի ոտած վնասներից, այլ իրանց հաւատակիցներից ստացված հարուածից, որի ամենամեծ հարուածը ինքնապաշտպանութեան համար ծախսված գումարներն են և այդ գործին նուիրվելը...

Աւ. Սահակեանց

—

ԽԼՐՏՈՒՄՆԵՐ ՇՈՒՇՈՒ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

(Դեկտեմբերի 8-ին)

VI

Շուշու թեմական դպրոցի միջնադէպը շարունակում է զբաղեցնել հայ հասարակութեան. նրանով հետաքրքրվում են համարեա թէ ժողովրդի բոլոր խաւերը։

Բացի այն երկու թռուցիկներից, որոնք անցեալ անգամ տուինք մենք ընթերցողին, հրատարակված են նաև մի շարք թռուցիկներ, որոնցից առաջ կը բերենք կարևորները, որպէս խնդիրը լուսաբանող և օժանդակող նիւթեր։

Մինչորդ դատարանի դատաւորները հրատարակել են հետևեալ թռուցիկը.

«Շուշու հասարակութեան.

«Մինչորդ-դատարանի նախկին անդամները, կարդալով թռուցիկներ՝ բաց թողնված երկու խումբ աշակերտների կողմից, բարոյական պարտաւորութիւն են համարում յայտնել հասարակութեանը.

«1) Որ մինչորդ-դատարանի առաջ դնվէ մինչև այդ վերջին նիստը հարցաքննված մի շարք վկաները ցոյց տուած երկու կողմից էլ (բոլոր օրիորդներ, բոլոր ուսուցիչներ և մի աշակերտ) չեն հաստատում Ա. Մելքոնեանի վրա բարդված մեղադրանքներն երկու կողմից՝ մենք աւելորդ ենք համարում պատասխանել։

«Ով որ հետաքրքրվում է մանրամասնութիւններով, կարող է ծանօթանալ մինչորդ-դատարանի արձանագրութիւնների հետ, դիմելով դատաւորներին։

«Մինչորդ-դատարանի Նախկին վեց անդամներ. եօթերորդը դէմ է հասարակութեան առաջ դուրս գալ որևէ յայտարարութիւնով, իսկ երկուսը հրաժարվել են ներկայ լինելուց նիստերին։

«Դատաւորների եօթ ստորագրութիւններ»։

Դեկտեմբերի 3-ին.

Այս թռուցիկի հրատարակումից յետոյ, հետևեալ օրը, դեկտեմբերի 4-ին, դպրոցի հոգաբարձութեան հրաւէրով, քաղաքացիներից մօտ 60 հոգի հաւաքվեցին դպրոց՝ խորհրդակցելու միջնադէպի առիթով և կարելւոյն չափ աշխատելու հաշտեցնել երկու անհաշտ կողմերին։ Զորս բարձր դասարանների աշակերտների ծնողների բացակայութեան պատճառով (ծնողների մեծ մասը ապրում է գիւղերում), ցաւօք սրտի այդ ժողովին ներկայ էին միայն մի քանի հոգի, իսկ մեծ մասը դպրոցի հետ ոչ մի առնչութիւն և կապ չունեցող անձինք էին, որոնց երեխաները սովորում էին բնական և այլ դպրոցներում, հետևապէս նրանք այնքան էլ շահագրգռված չեն այդ միջնադէպով։ Ներկայ եղողներից ոմանք պաշտպանում էին աշակերտներին, ոմանք պ. Մելքոնեանին և այլն... Այդտեղ երկար ու բարակ խօսվեց մինչև դէպի առիթով. շատերը կշտամբում էին ուսուցչին նրա վերաբերմունքի համար, շատերն էլ արդարացնում նրան, որ այլ կերպ չէր կարող վարվել ուսուցիչը։

Քանդան թիր և դէմ կարծիքներ և առաջարկներ անելուց յետոյ ժողովը վճռեց երկրորդ անգամ ընտրել միջնորդ-դատարան՝ բաղկացած 8 հոգուց և ընտրված երկու կողմից, որը պէտք է հոգաբարձութեան հետ միասին ընտրի այդ միջնադէպը և յանցաւոր կողմին պատժէ։ Սակայն երբ հետևեալ օրն այդ վճիռը յայտնվեց աշակերտներին, վերջինները բացարձակապէս բողոքեցին այդ բանի դէմ, չը կամեցան ընդունել այդ առաջարկը և այդ օրը, ամսի 3-ին, դասադուլը շարունակեցին...

VII

Հակառակ բանակի աշակերտներն ու քաղաքացիները գտնում են, որ այդ միջնադէպը կարող է վատնդել դպրոցի գոյութիւնը։ Հաշտութեամբ վերջացնելու ջերմ ցանկութիւնը նկատելի է նրանց մէջ, և ահա, ամսի 4-ին, բարձր դասարանների մի խումբ աշակերտներ, որոնք պաշտպանում են ուսուցչին և մեղադրում իրանց ընկերներին այդ միջնադէպում, հրատարակել են հետևեալ ուշագրաւ թռուցիկը.

«Ընկերներ.

«Կայ մի գովելի առաքինութիւն մարդկային կեանքի մէջ. այդ այն է, որ մարդիկ ըզգալով իրանց սխալը՝ յետ են կանգնում անվախ և ինքասկար ճանապարհից և բռնում արդարութեան և շիտակութեան ուղին։

«Ընկերներ, պարզ է ամեն ինչ, պարզ աւելի քան արևի լոյսը։ Մի քանի նեղ կուսակցական և գծուծ հոգու տէր անձնասիրութիւններ ձեռք ձեռքի տուած մի քանի եսամոլների ու անձնական հաշիւներով առաջնորդվող անհատների հետ՝ իրանց շահատակութիւնների ասպարէզ են դարձրել մի սրբազան վայր, որի ատենն է թեմական դպրոց։ Անհատներ, որոնք լեռնացած կրքերով մի ըսպէ անգամ ի նկատի չեն առնում ներկայ քաղաքական տագնապալից դրութիւնը, երբ բիւրօկրատ կառավարութեան դիմող աչքից չէ խուսափում ոչ մի խաղաղ շարժում իսկ, ուր մնաց խուսափէ մի շարժում՝ հասած «տուր ու դմփոցի»։ Անհատներ, որոնք գուրկ են ժարդկային ամեն մի զգացումից՝ իրանց անգուսպ կրքերին զոհ են դարձրել թէ ձեզ և թէ դպրոցը։ Մի վախենաք, ընկերներ, հեռու այդ դարշ անհատներից. ուշքի եկէք, ընկերներ. ամեն ինչ դեռ կորած չէ։

«Մի վտանգէք դպրոցական հիմարկութիւնը, մի զոհէք հարիւրաւոր անմեղ մանուկներին չարչի անհատների լեռնացած կրքերին։

«Թողէք այդ անհատներին, որ իրանք մաքրեն իրանց հաշիւները։

«Դուք ոչ մի օգուտ չունէք ձեր արած այդ քայլից, բայց տուած զոհը մեծ է լինելու, մեծ և չափազանց հիսաթափեցուցիչ իր հետևանքներով... Ողջացէք գոնէ հոգսերի ծանր բեռի տակ ճնշված ու աշխարհային մեծ անարդարութիւններից մէջքը կորացած, տանջված, չարքաշ ժողովրդին ու նրա անմեղ մանուկներին, որոնց հետ նա կապել է իր ապագան ու բախտը...

«Մի խորտակէք անմիտ հարուածով նրա ապագայի այդ վառ յոյսերը և մի խաղաք նրա բախտի հետ։

«Ընկերներ, ժամանակ է սթափվելու. թէ չէ՝ հիասթափութեան ուրուականը քայլ առ քայլ հետևում է ձեզ։

«Հեռու միանգամայն շահախնդիր ու գայլ անհատներից։

«Շտապեցէք, ընկերներ, քանի դեռ ուշ չէ»։

«Ի դիմաց բարձր դասարանների՝

մի խումբ «աշակերտներ»

Դեկտ. 4-ին

Այս թռուցիկի իր արձագանքը չը տուեց աշակերտութեան մեծամասնութեան մէջ և ոչ մի ցանկալի հետևանք չունեցաւ։ Ընդհակառակը, աշակերտութեան մեծամասնութեան համար այդ թռուցիկը պարզեց նրանց այլանդակ և ընորոշ պատկերը։ Սակայն մի կարևոր թռուցիկ ևս, որ իրերի դրութեան վրա մեծ լոյս է սփռում, այդ բարձր դասարանների աշակերտների երեկվայ բաց թողած թռուցիկներ է ուղղել ընտրողներին և կազմակերպել է յատուկ տեղեկատու բիւրօ։

—Դեկտեմբերի 7-ին Պետերբուրգի քաղաքային վարչութիւնը քննել է այն հարցը, թէ ինչ պայմաններով, համաձայն անցեալ տարվայ դումայի կայացրած որոշման, կարելի կը լինի տալ դումայի շինութիւնը ժողովրդական միտինգների համար, այսինքն հարկաւոր է, արդեօք, վարձ վերցնել լուսաւորութեան, տաքացնելու և ծառաների մատուցած ծառայութեան համար։ Քաղաքային վարչութիւնը այդ բոլոր ծախքերը իր վրա է առել և մօտիկ ապագայում քաղաքի մի քանի շինութիւնները կը յատկացնի ժողովրդական միտինգների համար։

—

ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

—

Վերջին ժամանակներս յաճախ լուր էր պատում, որ իբրև թէ Մոսկվայի համալսարանում զինված ապատամբութեան տարեդարձի օրերում ցոյցեր ու թափօրներ են տեղի ունենալու. այժմ պարզվել է, որ այդ լուրերը, գլխաւորապէս, գալիս են պրօվոկացիոն աղբիւրներից։ Ուսանողների, համարեա, անհնարին փոքրամասնութիւնը միայն հարկաւոր էր համարում որևէ ցոյցով տօնել անցեալ տարվայ անցքերի տարեդարձը։ Միւս կողմից համալսարանի վարչութիւնը և պրոֆեսօրները հաւատացած էին, որ ուսանողների ահագին մեծամասնութիւնը ոչ միայն ցոյցեր չի անելի, այլ և միանդամայն հակառակ կը լինի։ Այդ պատճառով պրոֆեսօրների խորհրդի մէջ նոյնիսկ հարց չէ ծագել ծնունդեան սովորական տօներից առաջ, դեկտեմբերի 16-ին, համալսարանը փակելու մասին։ Այնուամենայնիւ վերջին օրերս ուսանողների առաջնակարգ ցոյցերի մասին տարածված լուրերը գընալով սուր կերպարանք են ստանում ու պարզապէս զայրոյթ պատճառում։ Սակայն այդ պրօվոկացիոն լուրերն ու զրգռումները անհետանալ անցան, որովհետև ուսանողական վերջին խորհրդի մէջ որոշել են հրաժարվել ցոյցերից ու թափօրներից դեկտեմբերեան անցքերի տարեդարձի առիթով։

—Դեկտեմբերի 5-ին պօլիտեխնիկական ինստիտուտում կայացած երեկոյթում կատարել են 80 հոգու։ «Русь» լրագրը հաղորդում է, որ կատաստրոֆների թեումը էր գտնվում և Շլիսսելբուրգի նախկին կառնուրը Ն. Մօրօզով։ Հանդիսականների մի մասը առաջին կատաւորութիւններից յետոյ վերադառնալով ինստիտուտ հաղորդում է ելոյթների մասին իբ. Դպարէնին։ Ոստիկանմասի հրամանատարը վերջինիս խոստացել է թողնել բոլոր հանդիսականներին անարգել կերպով հեռանալու։ Սակայն դրանից յետոյ էլ կատաւորումներ են կատարվել։ Այն ժամանակ իշխան Դպարէնը դիմում է կատաւորումը դեկավարող ոստիկանին և պահանջում յայտնել իր ազգանունը։ Դրանից յետոյ միայն վերջ են տուել կատաւորութիւններին։ Կատաւորների մի մասը արդէն ազատված է։

—Դեկտեմբերի 6-ին, ցերեկվայ ժամի 12-ին, ելեկտրօ-տեխնիկական ինստիտուտի դիրեկտորին դիմում է տեղական ոստիկանմասի պրիստաւը և պահանջում անյապաղ փակել ինստիտուտում այն ժամանակ տեղի ունեցող ժողովը և հեռացնել կողմնակի անձանց, հակառակ դէպքում սպառնում է կատաւորել բոլոր ժողովականներին։ Դիրեկտորի առաջարկութեամբ, ժողովը խսկոյն ցրվել է և ոչ ոք չէ կատաւորվել։

—Դեկտեմբերի 5-ին Կրօնշտադի բէալական դպրոցում դասադուլ են արել 5-րդ և 6-րդ դասարանները։ («Пет. Лист.»)

—Մօտ ժամանակներս Պետերբուրգի ելեկտրօ-տեխնիկական ինստիտուտում Նաբօկովը մի զեկուցում է կարդացել ժողովրդական աղատութեան կուսակցութեան տակտիկայի ու գործունէութեան մասին։ Այդ առիթով կարծիքների փոխանակութիւն է եղել ներքին գործերի մինիստրի և ինստիտուտի դիրեկտորի միջև այն հարցի մասին, թէ ինչ հիման վրա թոյլատրվեց հակակառավարական բովանդակութիւն ունեցող մի զեկուցում կարդալ և այն էլ մի մարդու, որ ակներև պատկանում է կառավարութեան հակառակ բանակին։ Դիրեկտորը պատասխանել է, որ, ինստիտուտի նիստում կանոնադրութեան հիման վրա, նա իրաւունք ունի թոյլատրել դասախօսութիւնները, ընթերցանութիւնները և այլն ինստիտուտի մէջ։ Այնուամենայնիւ դիրեկտորին առաջարկել են կողմնակի անձանց թոյլ տալու հարցը քննել խորհրդի մէջ։ Խորհուրդը որոշել է կողմնակի մարդկանց թոյլատրել առանձին տոմսակներով, մտտեսական կօմիտէի անդամների թոյլատրութեամբ։ («Рѣчь»)

—Դեկտեմբերի 7-ին, ցերեկվայ ժամի 4-ին, Մօսկվայի համալսարանի իրաւաբանական բաժնի շինութեան մէջ պէտք է տեղի ունենար ուսանողական ընդհանուր ժողով։ Սակայն նշանակված ժամին դարպասները փակված էին, իսկ ամեն կողմում ոստիկանական պահակներ կանգնեցված, որոնք ուսանողներին ներս չէին թողնում։ Դարպասի մօտ պատերին կպցված էր ռեկտորի յայտարարութիւնը, որ ժողովը թոյլատրված չէ, որովհետև ուսանողները պրօկուրորի հետ չեն բանակցել։ Համալսարանը ամբողջ օրը փակ է մնացել։ Լուր է պտտում, որ այս տարի նա այլևս չի վերաբացվիլ։

—

ԳՈՒՆԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

—

Պետերբուրգում, բացի «հողի և իրաւունքի դաշնակցութիւնից», մօտ ժամանակներս կազմվել է և պրօգրեսսիվ ընտրողների անկուսակցական կօմիտետ, որտեղ, «Русь» լրագրի ասելով, մտնում են անկուսակցականները, մի քանի ձախակողմեան կադետներ, ժողովրդական-սոցիալիստներ, աշխատաւորներ, սոցիալ-դեմօկրատներին համակրողները և այլն։ Արդէն կազմակերպվել են բայսնական ժողովները և մշակված է անկիտան։ Կօմիտեի բաժանմունքներից մէկում սոցիալ-դեմօկրատներին համակրողներից ոմանք առաջարկել են հարցնել ընտրողներին միայն այն մասին, թէ նրանք ցանկանում են արդեօք ձայն տալ սոցիալ-դեմօկրատներին։ Այդ առաջարկը մերժվել է։ Այդ գործին զլուխ են անցել մի շարք յայտնի անկախ գործիչներ։

Վիբորգեան թաղամասում պրօգրեսսիվ ընտրողների մի խմբակ է կազմակերպվել, որը նպատակ ունի մի շարք նախընտրական ժողովներ կազմելով ծանօթացնել ընտրողներին Ռուսաստանում ներկայումս գոյութիւն ունեցող բոլոր քաղաքական կուսակցութիւնների ծրագիրների հետ։ Այդ խմբակը արդէն թռուցիկների է ուղղել ընտրողներին և կազմակերպել է յատուկ տեղեկատու բիւրօ։

—Դեկտեմբերի 7-ին Պետերբուրգի քաղաքային վարչութիւնը քննել է այն հարցը, թէ ինչ պայմաններով, համաձայն անցեալ տարվայ դումայի կայացրած որոշման, կարելի կը լինի տալ դումայի շինութիւնը ժողովրդական միտինգների համար, այսինքն հարկաւոր է, արդեօք, վարձ վերցնել լուսաւորութեան, տաքացնելու և ծառաների մատուցած ծառայութեան համար

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԵՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

—

Ռուսաստանի ներքին նահանգներից հաղորդում են ժողովրդական ազատութեան կենտրոնական կոմիտեին, որ վերջին ժամանակներս բեպրեսիաները յիշեալ կուսակցութեան անդամների դէմ բաւականաչափ ասպակցել են։ Տեղական ադմինիստրացիան, ինչպէս երևում է, նպատակ է դրել բոլորովին հեռացնել ասպարէզից ժողովրդական ազատութեան կուսակցութեան գործունեայ և ազդեցիկ գործիչներին։ Կուսակցութեան անդամները ամենայն օր խուզարկութեան են ենթարկվում, կուսակցութեան գրականութիւնը գրաւվում է, նոյնը և կոչերը, թռուցիկները, առանց ի նկատի առնելու նրանց բովանդակութիւնը։ Բացի զրանից գաւառներից տեղեկութիւններ են ստացվում, որ շարունակ խուզարկութիւն են կատարվում բոլոր պրոգրեսիվ խմբագրատներում, գրախանութներում և պահեստներում։

—Դեկտեմբերի 4-ին կայացել է Պետերբուրգի մասի գործակատարների պատգամաւորական երկրորդ խորհրդակցութիւնը նախընտրական համաձայնութիւնների ուժիով։ Ժողովին ներկայ են եղել կադետների և սոցիալ-դեմօկրատների ներկայացուցիչները։ Շարունակելով քննել կուսակցութեան ծրագրային հարցերը, աշխատաւորների շահերի տեսակէտից ընդհանրապէս և մասնաւորապէս գործատարների, ժողովը վճռել է մի անգամ ևս քննել այդ հարցերը իր շրջանում, առանց կուսակցական ներկայացուցիչների մասնակցութեան։

—Պետերբուրգի սոցիալ-դեմօկրատական կազմակերպութիւնները ներկայումս հանդուն կերպով աշխատում են բանւորական շրջանում լիազօրների և ընտրողների թեկնածուներ նշանակելու համար։ Այդ նպատակով հաւաքում են խոշոր գործարանների և ֆաբրիկաների բանւորներին, կուսակցութեան անդամներին, և գազանի ընտրութեամբ նշանակում են թեկնածուներ իւրաքանչիւր գործարանում։ Սոցիալ-դեմօկրատների կուսակցութեան ընտրողական մանաժողովները իրանց կուսակցութեան «համակրողների» համար ժողովները են դումարում, թէ բանւորներից և թէ ազգաբնակութեան միւս խաւերից։ Ժողովներում պարզում են սոցիալ-դեմօկրատների ծրագիրն ու տակտիկան, մանաւանդ զգուշանում են նրանք Դումայի և համաձայնութեան վերաբերեալ հարցերում։

—Ժողովրդական ազատութեան կուսակցութեան Պետերբուրգի կոմիտեը ներկայացրել բանակցութիւն է վարում լեհական գաղութի հետ Պետերբուրգում ընտրողական համաձայնութիւն կայացնելու մասին։ Շատ հաւանական է, որ լեհական գաղութը անցյալ տարվայ նման ամբողջովին կը միայ ժողովրդական ազատութեան կուսակցութեան մէջ։ («Գող.»)

—Պարիզից «Рѣчь» լրագրին հաղորդում են, «Գէդի նամակը «Նոր.» լրագրի մէջ տպագրվելուց յետոյ, որպէս նա խորհուրդ էր տալիս համաձայնութիւն կայացնել լիբերալ-դեմօկրատական օպպոզիցիայի հետ առաջիկայ ընտրութիւնների ժամանակ յայտնի մեծամասնականներից մէկը հեռանալ հեռագրին և ուղարկել Գէդին։ «Ապշած եմ ձեր նամակով, որը հակասում է դասակարգային կռուի սկզբունքներին»։ Մեծամասնականը չէր կարողանում հաւատալ Գէդի նամակի սուտ լինելուն և խնդրում էր հաստատել՝ իր նամակն է արդեօք։ Գէդը պատասխանել է. «Սոցիալիստի պարտականութիւնն է կռուել աբսոլուտիզմի դէմ։ Եթէ անկարելի է սեփական դասակարգից թեկնածու դնել,—հարկաւոր է կօալիցիայի մէջ մտնել»։

Եւ դժ., Բրուտոս!

—Բացի թէյարան-հաշարաններից, ռուս ժողովրդի դաշնակցութեան գլխաւոր խորհուրդը կազմակերպում է ամենուրեք, որտեղ հնարաւոր է, բաժանմունքներ՝ ագիտացիաներ և ակիով կռիւ մղելու համար։ «Մենք յոյս չունենք Դումայի վրա,—ասում են նրանց անդամներից շատերը,—դժուար կարելի է Դումա գնալ. այդ մենք հասկանում ենք։ Սակայն մեր նպատակն է գործը այնպէս կարգաւորել իր տեղում, որպէսզի հարկաւոր դէպքում կարելի լինի միանգամից իրարանցման մէջ դնել մասսաները։ Մեր կողմն են ամբողջ ադմինիստրացիան և քահանաները, իսկ ծխականները մեր բանտքի մէջ են գտնվում։ Իսկ թէ ինչպէս կը վարվեն Դումայի հետ, կը հաստատեն, արդեօք, թէ ոչ, այդ արդէն իշխանութեան գլխաւորները։ Բայց և այնպէս բաժանմունքների գործը այնքան էլ աջողութեամբ չէ առաջ գնում. Նրանց մեծ մասը հաղիւ հաղ է իր գոյութիւնը կարողանում պահպանել, և անվերջ վէճեր են տեղի ունենում «սուբսիդիաներից»։ Ուրիշները պահանջում է, որ բաժանմունքները իրանք իրանց համար միջոցներ որոնեն. իսկ այդ նրանք անել ամենևին չեն կարող, մանաւանդ նրանցից փախչում են ինչպէս խօլերայից...

ՄԻ ՆՈՐ ՀԱՑ ԴՐԱՄԱՏՈՒՐԳ

—

Այս նոր հայ դրամատուրգը 22 տարեկան մի պատանի է, դուրս եկած գիմնազիայի II-րդ դասարանից, բայց ինքնակրթութեամբ ձեռք բերած մեծաւոր այնքան պաշար, որ հնարաւորութիւն է տալիս այժմ նրան երևան հանել իր բնածին ձիրքը և բեմական ընդունակութիւնը։

Նրա անունն է Լ. Կ. Աւչեան։ Նա գրել է 1904—06 թ. ընթացքում ուսերէն մօտ 15 պիէսներ—պատմական դրամներ, որոնցից մինը՝ «Աւստրիական պրինց Դօն-Ժուան» դր. 5 գործողութեամբ և 6 պատկերներով՝ նա ներկայացրել է մի քանի ժամանակ առաջ Պետերբուրգի կայսերական թատրոնների վարչութեան ի քննութիւն։ Մի քանի ժամանակ առաջ այդ վարչութիւնը յայտնում է պ. Աւչեանին, որ նրա «Պրինց Դօն-Ժուան» պիէսն հաւանութիւն է գտել թատրոնական-գրական կոմիտեի կողմից և որոշվել է ներկայացնել այդ պիէսը այս դեկտեմբերի 12-ին Պետերբուրգի Ալեքսանդրեան թատրոնի բեմի վրա, ուստի և նա, իբրև հեղինակ, հրաւիրվում է գնալ Պետերբուրգ և ներկայ լինել իր պիէսի ներկայացմանը։ Այդ հանգամանքը արդէն ցոյց է տալիս, որ պատանի Աւչեանը ունի բեմական տաղանդ, որ կարող է հետզհետէ կատարելագործվել։ Դժբախտաբար, Աւչեանը, բոլորովին զուրկ լինելով միջոցներից, անկարող է լինում գնալ Պետերբուրգ։ Միայն վերջերս Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովը, մտնելով երիտասարդի դրութեան մէջ, հրամայել է տալ նրան ձրի երկաթուղային տոմսակ մինչև Պետերբուրգ, բայց նա ուրիշ ծախքերի համար չունի միջոց։ Այս օրերս նա դիմել է Հայոց Դրամատիական ընկերութեանը, որին ներկայացնելով թէ «Պրինց Դօն-Ժուան» պատմական դրամն և թ. ուրիշ 7 պատմական դրամաներ, խնդրել է տալ իրան մի փոքր գումար Պետերբուրգ գնալու համար և օգտվել իր պիէսներից հայոց բեմի համար։ Հայոց Դրամատիական ընկերութեան վարչութիւնը խոստացել է օգնել նրան։

Նոր դրամատուրգը ծագումով Թիւրքահայ է։

Հ. Ա.

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՄԱՍԻՆ

—

Հինգ ամիս է, ինչ գրել են առաջին Պետական Դուման։ Իսկ նորի բացվելուն մնացել է միայն երեք ամիս։

Ամենքը տեսան, թէ Նախկին Դումայի ցրվելուց յետոյ ինչպէս տեղի ունեցան Ռուսաստանում։ Ռուսաստանը դարձաւ արեան մի ծով, որի վրա լողացող նաւում, ռուս ժողովրդի մեծամասնութիւնը ամեն րոպէ խորասուզվելու վտանգի մէջ է։ Այդ ծովի վրա իբրև փոթորիկ իշխող բիւրօկրատները ամեն ջանք գործ են դնում իրերը խանգարելու, ջրերը պղտորելու, որպէսզի կարողանան իրանց գործերը դրստել, խանգարիչութիւնից օգտվելի։ Իսկ բանակալութեան երկրպագուները աշխատում են նեցուկ լինել այդ փոթորկին և ազգն ու հասարակութիւնը միանգամայն ոչնչացնել։

Այդ փոթորկող բիւրօկրատները, բանակալութեան այդ երկրպագուները իրանց անհասական շահի համար անգթորէն զոհում են ընդհանուրի շահերը, երկիրը աւերելով և գանձի հաւասարեցնելով։ Նրանք չեն քաշվում նոյնիսկ ամենազզուելի ոճիրներից։ Սև հարիւրակները, ռուս մարդկանց դաշնակցութեան խմբերը և նրանց նմանները մի կողմից՝ ժողովուրդը մատնում են պատերազմաղաշնային դատարանների, կախաղանների և մահվան պատիժների նման անգութ և անողորմ պատուհասների, իսկ միւս կողմից՝ իրանք հեռու կանգնած՝ հանդիսատես կեանք են վարում և անփոյթ հանդիսատես են լինում այդ տեսարանին։

Բայց եթէ նոյնիսկ նոր Դուման ցումաքի, ինչ որ նրանք չեն ցանկանում, դա ոստիկանական մի հիմարութիւնից տարբեր բան չէ լինելու։ Ամեն մի կենդանի արարած՝ իր մասին մտանալն զգալով, իր վերջին շունչը մի քիչ աւելի երկարացնելու համար, խորութիւն չի դնի ոչ մի միջոցի մէջ, կանգ չի առնի ոչ մի քայլի առաջ։ Նմանապէս Ռուսաստանի բանակալութեան երկրպագուները, բիւրօկրատները Դումայի բացումը նշանակում են իրանց բանակալութեան և բիւրօկրատիզմի մահը։

Ներքին գործերի մինիստրի օգնական Կրիժանովսկի իր նոր նիկայացած տեղեկագրում անհրաժեշտ է նկատում Պետական Դումայի բացման մի քիչ յետաձգումը։ Դրան իբրև արդարացում, ցոյց տալիս է այն, որ նահանգապետերը դեռևս չեն ուղարկել իրանց տեղեկագրերը Պետական Դումայի մասին։ Կրիժանովսկու ասելով՝ բոլոր նահանգապետները իրանց տեղեկագրերն ու քարտուղարութիւնները կը ներկայացնեն միայն փետրվար ամսում։

Դա միայն արտաքին արդարացումն է. իսկ ներքնապէս նրանք մտածում են, որ Ռուսաստանի ազատասէր տարրերի արմատը դեռևս կտրված չէ, և հետևաբար Դուման նրանց ձեռքն ընկնելով զրանից կը տուժեն իրանք, բիւրօկրատները։ Ուրեմն եթէ Դումայի բացումը մի քիչ էլ յետաձգվի, ազատասէրները հետզհետէ կը նուաղեն, և նրանք իրանց Դուման բաց կանեն կամ միւս աշխարհում և կամ Սիբիրի բանտերի խորշերում։ Իսկ մնացեալ իսկական ռուս մարդկանց և նմանների համար Պետական Դուման կամ միանգամայն անպէտք է լինելու (հէնց այդ էլ է բիւրօկրատիզմի բուն ցանկութիւնը) և կամ, եթէ նոյնիսկ բացվի, անդամներն իրանց մարդիկն են, մի կերպ հօրս մենեցուն կը հնչեցնէ իր անեղ ձայնը։

Օգտվելով մոլեռանդ և տգէտ ռուս խուժանի ոչխարային հետևողութիւնից, նրանք ամեն ջանք գործ են դնում խեղճ ու կրակ և առանց այն էլ շուարած ժողովրդին մոլորեցնելու և իրանց ազդեցութիւնը նրա վրա զօրացնելու։

Այսպէս «իսկական ռուս» մարդկանց խուժանի շարքերը խտացնելու «սուրբ գործի» դէպքում, «հրէաներին, ապստամբներին և հայրենիքի թշնամիներին» մի քիչ խրատ տալու դաղանակ գործածել—դրանք կատարելապէս իրաւունք ունեն։

Ամենքին յայտնի է, թէ այս հալածանքները, այս բռնութիւնները, կեղծ-հայրենասիրութեան ու ազգասիրութեան քողով ծածկված այս ցոյցերն ինչ ողբալի դրութեան մէջ մինչև այժմ դրել են և պէտք է դնեն այսուհետև մեր հայրենիքը, Ռուսաստանը։

Մեզ ամենևին ձեռնտու չէ անտեղեակ մընալ անգիտութեան վարագոյրով ծածկել Ռուսաստանում կատարվող հարաւ-հրոցները, ասէ-կոսէները, սրով և առանց սրի կոտորածները. մանմեղականները պէտք է այս արտասովոր հոանքի ու շարժումների առաջ պատրաստ գտնվեն։

Մենք էլ ռուսաստանցիներ ենք, մենք էլ այս հողի զաւակներ ենք, հետևաբար այստեղ յառաջ եկող բոլոր չարիքներին ու բարիքներին մասնակից ենք և պէտք է մենք էլ բերենք մեր աշխատանքի բաժինը բուն գործում։

Հաշիմ-բէգ Վէգիրով

(«Իրշադ»).

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ԵՐԵՒԱՆԻ ԱՐԱԿԱՆ ԳԻՄՆԱԶԻԱՅԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՌԻԹՈՎ

—

Դեկտեմբերի 10-ին

Շատ իրաւացի կը լինէր այս համեմատութիւնը, որ կանանց մօտանները, որոնք սովորաբար գալիս են Պարիզից, աւելի արագ և անթերի են հասնում նոյնիսկ այնպիսի հեռաւոր անկիւններ, ինչպիսին է մեր նահանգական քաղաքը, քան թէ մի կառավարչական նորմալութիւն, ինչպիսին է գիմնազիային կից հիմնվելիք ծնողական խորհուրդը։

Միշանկեալ նկատողութիւնս հէնց նրա համար է, որ այն խորհուրդը, որ պիտի գոյութիւն ունենար մի տարի առաջ, ինչպէս որ նա էլ բոլոր գիմնազիա ունեցող քաղաքներում, մեր ատուռուծվախ Երևանում հաղիւ այս տարի կազմվեց և այն էլ ոչ շատ քան մի քանի շաբաթ սրանից առաջ։ Խորհրդի սկզբնաւորութեան յապաղումը նոյնպէս անգամ ուանգկական պայմանների վերագրվեց, ինչպէս այդ բացատրեց վերջին ծնողական ընդհանուր ժողովում գիմնազիայի վարչութիւնը։

Ինչ խօսք՝ ինչքան որ նոր երևոյթ է այսպէս ասած ծնողական ժողովի խորհրդի երևալը մեր կառավարչական ուսումնարանների կեանքի մէջ, և այն՝ շատ համակրելի երևոյթ, որի վրա արժէր կանգ առնել ընթերցող հասարակութեան ծանօթացնելու նրա անհրաժեշտութեան և կարևորութեան հետ,—բայց այժմ սահմանված եմ կարճել իմ խօսքը այդ մասին, նկարագրելով վերջին ընդհանուր ժողովի ընթացքը։

Գիմնազիայի բողոքելու դէպքը մեր նոր սեղանի վրա մեծ յոյսեր դնող մեր ընկեր-ծնողների հասարբերութիւնը ու յանցաւոր սառնասրտութիւնն է։ Երևակայեցէք, ընթերցող, թէկ ուշ, բայց վարչութիւնը երկու-երեք անգամ հրաւիրում է ծնողական ընդհանուր ժողով, և ամեն անգամ 600 հոգի աշակերտ ուղեցող գիմնազիայից արձագանք են տալիս 60—70 հոգուց ոչ աւելին։ Կանոնագրքի հիման վրա վերջին ընդհանուր ժողովը քանի հոգուց էլ որ բաղկացած լինէր, պիտի օրինաւոր ճանաչվէր, ուստի և ընտրութիւնները կատարվում են, հեռաւոր փոքրաթիւ անդամների ձեռքով։ Ամեն մի դասարանից ընտրվելու էին 3—10 հոգի պատգամաւորներ (որոնք ծնողական խորհրդի անդամ պիտի ընտրեն իրանց միջից) և մի ներկայացուցիչ ուսուցչական ժողովին մասնակցելու համար։ Երևակայելու է մի ընտրութիւն, որտեղ բոլոր ընտրողները համարեա ընտրվողներն են լինելու։ ամեն մի դասարանի մէջ, այնքան քիչ էին ծնող-անդամները։ Ահա այս վերջինները, թւով 35—40 հոգի, ընտրեցին իրանց մէջից ծնողական խորհրդի անդամներին։ Դուք արդէն, ընթերցող, երևակայում էք՝ թէ ինչ պայմանների մէջ է դրված եղել ամբողջ այս ծանրակշիռ խնդրի շուրջը պտտող ընտրութիւնների գործը։

Ցանկանում ենք ընտրված խորհրդի անդամներին աջողութիւն։ իսկ այն ծնողները, որոնք գիտակցում են այս գործի անհրաժեշտութիւնը և կարևորութիւնը, թող շտապով օգնութեան գան թէ բարոյապէս և թէ նիւթապէս արդէն գործող խորհրդի մարմին։ Իսկ մեր գիմնազիան ունի շատ թերի և հիւանդոտ կողմեր, որոնց վրա հրաւիրում եմ մեր նորընտիր խորհրդի անդամների առանձին ուշադրութիւնը։

Ծնող

ՆԱՄԱԿ ԵՒՊԱՏՈՐԻԱՑԻՑ

—

Դեկտեմբերի 1-ին

Թուլիգան ու մութ ոյժերի չար միաւորներով սկսած գործունէութիւնը այստեղ էլ արդէն չափազանց մեծ չափերի է հասնում։ Խօսքս «իսկական ռուս» մարդկանց մասին է։ Սրանից մի քանի ամիս առաջ Նէպատորիան ևս դժբաղդութիւն ունեցաւ տեղ տալու իր մէջ «իսկական ռուս» մարդկանց նորակազմ օրդային։

Մենք կարծում էինք, որ այստեղ նրանք այն աջողութիւնը չէին գտնի, որպիսին անակնկալ կերպով հանդիպեցին Օդեսայում, Եկատերինոսլաւում և սահասարակ Արիմի մեծ կենտրոնավայրերում. սակայն այդպէս չեղաւ։ Ճիշտ է, թէև նէպատորիայում նրանք այն մեծ աղմուկը չը հանեցին, որպիսին Օդեսայում, որտեղ այդքան հզօրացել են, որ նոյնիսկ ուսանողական պարբերական ջարդեր են տեղի ունենում, սակայն այստեղ էլ նրանք քիչ բան չեն անում, հետզհետէ ուժեղանում են, այնպէս որ՝ չի կարելի շատ էլ հեռու համարել այն ժամը, երբ տեղիս օրգան էլ ի լուր ամենեցուն կը հնչեցնէ իր ահեղ ձայնը։

Օգտվելով մոլեռանդ և տգէտ ռուս խուժանի ոչխարային հետևողութիւնից, նրանք ամեն ջանք գործ են դնում խեղճ ու կրակ և առանց այն էլ շուարած ժողովրդին մոլորեցնելու և իրանց ազդեցութիւնը նրա վրա զօրացնելու։

Այստեղ «իսկական ռուս» մարդկանց խուժանի շարքերը խտացնելու «սուրբ գործի» համար աւելի քան աչքի է զարնվում տեղիս Արսէնիյ քահանան իր անձնանուիրութեամբ։ Նա վաղուց արդէն մոռացել է միջոցների մէջ խորութիւն դնելը։ Դումարելով «իսկական ռուս» մարդկանց ժողովներ Եւպատորիայում, նա չէ ամաչում ստեր յօրինելու ամբոխի աչքին թոզ փչելու համար։ Կանգնում է հարիւրաւոր ունկնդիրների առաջ ամբիօնի վրա և նրանց փորձում հաւատացնել, որ ինքը կայսրին այցելութեան է գնացել, տեսել է Նրան տիրոջ, հարցրել է խերութեան պատճառը, և Նորին Մեծութիւնը նրան ասել է, որ Իրան հանգիստ չեն տալիս «անիծած» հրէաները. ապա իբր ինքը իրաւունք է տուել ռուս ժողովրդի աջակցութեամբ այդ և նման անիծված ժողովուրդների ոտնձգութիւնների առաջն առնելու։ Ապա հ. Արսէնիյ խուժանին կոչ է անում բոլոր ուսումնարանները փակելու, որովհետև ըստ նրա այժմ գիտութիւնը կուրացնում է մարդկանց. «Մեզ պէտք չէնք,—ասում է,—գիմնազիաներ, նամանաւանդ համալարաններ, այլ բաւական կը լինեն միմիայն մի քանի հատ հոգևոր դպրոցներ»։ Մի խօսքով կոչ է յայտարարում ուսման և ուսանողութեան դէմ։ Ինչ ասել կուզէ, որ ժողովրդի ոգէտ ու խաւարամիտ մասի վրա նա կարողանում է ազդել։

Սակայն մեզ այնքան չէ զարմացնում գռեհիկ ամբոխի արտայայտած գիւային հրճուանքն ու ծափահարութիւնները, որոնք իբրև խրախուսանք են հանդիսանում այդ սքեմով միայն հոգևորականին, չէ զարմացնում նմանապէս տեղական պօլիցիայի նրան ցոյց տուած ակներև պաշտպանութիւնն ու համակրանքը, որքան թնդելիգենտների համալսարանական մարդկանց պարսկացնելութիւնը այդ ժողովներում, ինչ որ բոլորի համար արեւի լոյսի պէս պարզ է։ Շնորհիւ այդ պարմանների, որոնց մէջ քահանական տեսակէտից մեծ տեղ են զբաւում նաև Եւպատորիայի պետական մինչև-նակարգ դպրոցների ուսուցիչները, գիմնազիաներն էլ գերծ չեն մնացել թայֆայականութիւնն իրանց մէջ ընդունելուց, այնպէս որ գիմնազիաների և գիմնազիստների մէջ էլ խլրտումն է սպասվում։

Մենք չը գիտենք՝ ինչ անուն տանք այն տեսակ մարգկանց, որոնք պառակտման որսի են ցանում մատաղ սերնդի սրտերում։

Առհասարակ այդ տեսակի վերաբերմունքը ներելի չէ ինտելիգենտներից ոչ մէկին, կա առաւել հայ ինտելիգենտին։

Հայ ինտելիգենտն ենք ասում, որովհետև մեզ չափազանց մեծ զարմանք պատճառեց հայ փաստաբան Մուրադեանի, աբարքը։ Պարոնը չէ ամաչում հրապարակօրէն ծափ զարնելու ագէտ ու մոլեռանդ քահանայի կործանիչ կոչին։

Հ. Արսէնիյինը, չը բաւականանալով Եւպատորիայի ազգաբնակութիւնը գրգռելով, իր սեպհ պարտականութիւնն է համարում և մեր գաւառի գիւղերը շրջելու նոյն կեղտառ գիտաւորութեամբ։

Դեռ հոկտեմբերի 17-ի հրովարտակի ուժիով նա փորձ էր անում հրապարակական ցոյց սարքելու... Խեղճ հրէաներ... Սակայն նա այդ չը կարողացաւ աջողեցնել, երևի այն պատճառով, որ դեռ նոր էր սկսել նուիրվելը «վեհ» գործին, ինչու և բաւականաչափ հեռատես չէր գտնվել։ Հոգ չէ. իբրև սկսնակի, հասանական է, որ այդ կը ներվի նրան...

Որքան ցաւալի, համարեա նոյնքան էլ ծիծաղելի է լինում, երբ փարդուս աչքին է զարնվում նրա կրծքերին կախած «գրնկոմուտան նշանը»։ Ողորմելիները՝ կախելով Թիթեղի այդ չնչին կտորները՝ կարծում են, որ Մատուշկա-Բսսոխան արդէն փրկելու վրա են...

Մ.հատ

ԶԲԿՎԱԾԻ ԶԲԿԱՆԵՐԸ

—

Բաղաձորցի տէր-Մեսրովը քահանային պատահում է Նաթլուղ կայարանում մի լաւ հագնված պարոն և մտերմանում նրա հետ։ Հարցուփորձը պատում է Բաղայի արաւերքի և հայ հասարակութեան ու նպաստամատոյց յանձնաժողովների տուած նպաստների շուրջը, որոնց շնորհիւ Բագան փրկվեց սովամահ լինելուց։

«Ի հարկէ, իւրաքանչիւր հայի սրբազան պարտքն է իր եղբօրը օգնելու»,—աւելացնում է քնքոյշ զգայմունքի տէր անծանօթ պարոնը։

Հասնելով Թիֆլիսի կայարանը, տէր-հօրը առաջարկում է 5 ռուբլի մանրացնել կառքի փող վճարելու համար։ Տէրտէրը կատարում է պարոնի խնդիրը։ Ապա ջնտրմանն պարոնը առաջարկում է միասին կառք նստել իր մօտ հիւր լինելու։

Պարոնը կառքով տանում է տէրտէրին բոլորովին անծանօթ վայր։ Կառքից իջնելով անծանօթ պարոնը առաջարկում է մտնել մօտակայ վայրը մի մի բաժակ թէյ վայելելու համար։ Մտնում են մի նկուղ. անծանօթը դուրս գալով՝ դուռը կողպում է։ Մի քանի վայրկեանից յետոյ տէրտէրի մօտ են գալիս զրահաւորված երեք պարոն՝ մինդելի հագուստով, սուրերը հանելով՝ մահվան սպառնալիքի տակ խլում են 75 ր. եղած դրամը, ապա նորից 15 ր. վերադարձնելով ասում են. «Առ, որ մեզ քահանայական բերանով չանիծես»։

—Դէ գնա, ուրիշի բան չասես, ապա թէ ոչ, եթէ միւս անգամ այստեղ ընկնես, կենդանի չես դուրս գալ,—ասում են նրանք։

Սագան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, դեկտեմբերի 14-ին

Զբաղարտեալց չեն դադարում երկրականները, և երբեմն նոյն իսկ այնպիսի պարագաների մէջ, որի դատավճիռը ինքը հասարակութիւնն է տալիս։ Օրինակ՝ երկրականները ասում են, որ հայկական դեմօկրատիկ ընկերութեան հետ գաղտնի համաձայնութիւն են կապել միհրանականները, մինչդեռ այդ ընկերութեան առաջին ժողովը, որ աւելի քան 50 հոգի էր պարունակել իր մէջ կը վկայէ, որ Միհրանը միմիայն պարզ ունկնդիր էր այնտեղ, և երբ պահանջվեց նրա կարծիքը այդ ընկերութեան մասին, նա բոլորովին հակառակ կարծիք յայտնեց։

Իսկ ինչ վերաբերում է նրան, որ Հ. Յ. Դաշնակցութեան զին. խորհուրդը ընկել է փողոցները և ստորագրութիւն հաւաքում Դումայի առիթով, կասենք, որ առաջինը խորհրդի անդամներ չեն եղել, երկրորդ՝ որ Թիֆլիսում չի գտնվի մի հատիկ մարդ, որ հաստատէ Պետական Դումայի առիթով զին. խորհրդի հաւաքած ստորագրութիւնները։ Արդ՝ անպատկառ զրպարտութիւնը շարունակելով երկրականների ճակատին, վերջին անգամ յայտնում եմ հասարակութեան, որ մենք այլևս գլուխ չու

չենք երկրականների նորանոր սիրաղործութիւնները հերքելու։ Իսկ ինչ վերաբերում է մեր ընկերների կատարած բռնութիւններին, որ բռնութեան մասին դեռ պտիւ ունեն երկրականները ճառելու, այդ էլ թողնում ենք հասարակութեան այն բոլոր անձանց խղճին, որոնք որ մեր պաշտպանութեանն են դիմել և իրանց համակրանքն են յայտնել մեզ։

Միհրան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Անդրկովկասի երկաթուղու ճանապարհների կառավարիչը յայտնել է յիշեալ երկաթուղագծի գլխաւոր արհեստանոցի բանւորներին, որ ի նկատի առնելով շոգեմեքենաների և վագոնների վերանորոգման գործի անշահեկանութիւնը և դանդաղութիւնը, բանւոր ձեռքերի մեծ թանգութիւնը և վատ յատկութիւնը, երկաթուղիների վարչութիւնը հարկադրված էր վերանորոգութեան համար ուղարկել 20 մեքենաներ և շատ վագոններ մնացած երկաթուղիների արհեստանոցները, որը կը կրկնվի և սրանից յետոյ էլ։ Ուստի աւելորդ համարված բանւորների մի մասը կարձակվի և դեկտեմբերի 23-ին հաշիւ կը տրամայ։

—

1822 թուի կանոնադրութեան համաձայն, քաղաքային դպրոցների ուսուցիչներ պատրաստելու համար Ալեքսանդրեան ուսուցչական ինստիտուտը ուղարկված մասնագիտական ուսուցիչները դիմել են Կովկասի Փոխարքային մի միջնորդութեամբ, որով խնդրում են թոյլատրել իրանց գիտական ճանապարհորդութիւն կատարել դէպի Մոսկվա և Պետերբուրգ, ուսուցչական ինստիտուտի վերատեսուչ Ա. Մ. Զարուբովիչի ղեկավարութեամբ։ Այդ հանապարհորդութիւնը նրանք մտադիր են կատարել դեկտեմբերի 15-ից մինչև յունվարի 15-ը։ Բաքուի մասնագիտական բարեգործական ընկերութիւնը այդ հանապարհորդութեան համար 600 ռուբլի է յատկացրել։

—

Ուսուցիչ Յովսէփ Արարատեանը դիմել է նահանգապետին խնդրելով թոյլատրել իրան՝ բանալ «Թաբանութեան երեկոյեան դասընթացքներ չափահասների» համար։ Դէորգի դպրոցի շինութեան մէջ (6-րդ քաղաքամաս)։

—

Թիֆլիսի մի քանի շրջաններում միտք է յղացել հիմնել կրօնական-փիլիսոփայական ընկերութիւն, որի նպատակը կը լինի պարզել կրօնի և բարոյականութեան հարցերը։ («Т. Л.»)

—

Անցեալ տարի Քութայիսի գաւառի Կվաչխերի գիւղում անյայտ անձեր սպանել էին, Զեխիվաձէին, որից միացել են նրա այրին և որը երեխաները. հանգուցեալի այրին մի քանի անգամ ստացել է սպառնական նամակներ, որոնցով առաջարկել են թողնել իր ընակավայրը։ Բայց նա չէ կարողացել կատարել։ Դեկտեմբերի 3-ին, գիշերը, անյայտները յարձակվել են նրա տան վրա և փոշ են պահանջել, բայց տիկ. Զեխիվաձէի մօտ փող չէ եղել։ Յետոյ չարագործները փորձել են սպանել նրան։ Զեխիվաձէի փոքր որդին, տեսնելով այդ տեսարանը, կանգնել է մօր առջև, աղաչելով աւազակներին չը սպանել մօրը։ Բայց դաղանացած անյայտները երեխային մի կողմ դցելով մահացու կերպով վիրաւորել են այրուն 2 տեղից և հեռացել են։ Վիրաւորվածին տարել են Քութայիսի քաղաքային հիւանդանոցը։

—

Բաղուի գեներալ-նահանգապետը թոյլ է տուել «Каспій» լրագրի քարտուղարին հրատարակել մի ամենօրեայ թերթ «Народъ» (ժողովուրդ) անունով։

—

«Каспій» լրագրում տպված է Շուշու գաւառի Աղդաժի Թղթակցի մի նամակը, որի մէջ առաջ է բերված մի գաղնակցականի հետ ունեցած խօսակցութիւնը։ Թղթակցի ասելով, նրա «խօսակիցը չորս ամիս շարունակ շրջանում է եղել որոշ բայսնում և այդ ժամանակամիջոցում տեսել է իր շուրջը կատարվող դէպքերը»։ Նա պատմել է, որ հայ ազգաբնակութիւնը յայտնի դէպքերի ժամանակ անտանելի հարուածներ է կրել։ «Հայ ժողովուրդը,—ասել է նա,—շնորհիւ դաշնակցականների, վնասվեց ոչ միայն նիւթապէս, այլև բարոյապէս։ Իմ ժողովրդի բարոյական տանջանքների մասին աւելի լաւ է մի հարցնէք... իսկ նիւթական զրկանքների վերաբերմամբ գաղափար կարող էք կազմել նրանից, որ իմ խալիֆայութեան այդ չորս ամսվայ ընթացքում Ղարաբաղի ազգաբնակութիւնից, այլ և Շուշու, Զանգեզուրի և Կարեագիրի գաւառների հայերից ժողովված է 474 հազար ռուբլի։ Չորս ամսվայ ընթացքում 474 հազար, սա այնպիսի մի տուգանք է, որպիսին կարող է մի փոքր նախանձի արժանանալ իւրաքանչիւր եկեղեցուորից»։ (գործադիր անձն)։ Եթէ մի գաւառ 4 ամսվայ ընթացքում վճարում է համարեա էլս միլիոն ռուբլի, ուրեմն որքան է վճարում հայ ժողովուրդը տարվայ ընթացքում... ձիշտ է, արդեօք, սա։ Արդեօք ծայրայեղ կամքով չէ համեմել «Каспій» լրագրի «Թղթակցի խօսակիցը»։ Ցամենայն դէպս, «Դաշնակցութիւն» կուսակցութիւնը պէտք է բացատրութիւն տայ այս հրեշաւոր թուի վերաբերմամբ։ («К. Р.»)

—

Բաղուի Նօվօ-Սոլդատսկի բաղարի բնակիչները, թւով 64 հոգի, խնդրամատոյց են եղել ոստիկանապետին փակել այնտեղ եղած բոլոր դարեջրատները ու նպարեղէնի խանութները։

—

«Իրշադը» հաղորդում է, որ Թուրք հարուստների և պատուելիների մէջ միտք է յղացել մի Փոնդ հիմնել Բաքուում մանաւոր օմքարդ բանալու համար։ Կովկասում և Դաղստանում ճանապարհորդող Ահմէդ-բէգ Աղայէվին չքաւոր մուսուլմաններին նպաստատոյց կենտրոնական կոմիտէի կողմից յանձնարարված է նուիրատուութիւն հանդանակել և մանաւոր կոմիտեներ կազմակերպել։ Այդ յանձնարարութիւնը կատարելուց յետոյ Ահմէդ-բէգ Աղայէվը կը սկսի իր պրօպագանդան Թուրքական գիւղերում գրքեր և պարբերական հրատարակութիւններ տարածելու համար։

—

Ներքին գործերի մինիստրութիւնը մինչև դեկտեմբերի 6-ը տեղեկութիւններ է հաւաքել, թէ ինչպիսի դրութեան մէջ է գտնվում, կենական թագաւորութեան ընտրողական ցուցակները։ Հրատարակութեան համար պատրաստված 168 ցուցակներից չէ յայտարարված դեռ ևս 27 ցուցակ։ Եւրօպական Ռուսաստանի 51 նահանգներում պէտք է յայտարարվէր գաւառական հոգատէրերի 459 ընտրողական ցուցակներ և 506 քաղ. ընտրողական ցուցակներ։ Առաջիններից մինչև այժմ հրատարակել են 434 ցուցակ, մնում է դեռ 61-ը, իսկ երկրորդից 431, դեռ պէտք է հրատարակեն 75 հատ։ կարծում են, որ մինչև դեկտեմբերի 20-ը արդէն բոլոր ցուցակները յայտարարված կը լինեն։

—

Հատատ աղբիւրներից «Страна» լրագիրը լսել է, որ մօտ օրերս հրատարակվելու է վաղուց սպասվող օրէնքը հրէաների մասին։ Հիմք կայ կարծելու, որ այդ օրէնսդրական միջոցը կարող է շահաւէտ կերպով իր կողմը տրամադրել տրատասմանեան շուկաները նոր փոխառութեանը նպաստելու համար։ Սակայն չը պէտք է հաւատալ, որ հրէաների իրաւունքները ընդարձակելը բնակավայրերի սահմաններից կարող են դուրս մնալու։

—

Պետերբուրգի համալսարանի բեկտորը դեկտեմբերի 7-ին պաշտօնական գրութիւն է ստացել Պետերբուրգի քաղաքապետ Ֆօն-դեր-Լաուսնիցից, որով վերջինս նախազգուշացնում է բեկտորին, որ եթէ նա թոյլ տալու լինի բեֆերատներ կարդալ համալսարանում կողմնակի անդրնականների ներկայութեան իրաւունքով, այն ժամանակ նա ոստիկանութիւն կը մտցնի համալսարանի մէջ։

—

«Страна» լրագրի ասելով, տարաձայնութիւնները ֆինանսների և երկրագործութեան մինիստրների մէջ հողային շինարարութ

ղեկցիօնէր տարրերից, որոնց գերակշռումը մի պատուհաս էր դարձել գերմանական կեանքի նորմալ ընթանքի համար։

Բայխստագի լուծման արտաքին պատճառը թէև Աֆրիկայի գերմանական կալօնիաների խնդիրն էր, սակայն հաւանականաբար և ուրիշ հիմնական դրդիչներ պէտք է լինէին քաղաքական այս աչքի ընկնող դէպքի իրագործման ժամանակ։

Բաւականին երկար ժամանակներից ի վեր Գերմանիան Հարաւ-արևելեան Աֆրիկայում մի քանի մեծ կալօնիաներ ունի, որոնց ընակիչներն են կիսավայրենի հոտենտոտները և այլ ցեղերը։ Կալօնիաներ գրաւելում են, ի հարկէ, մայր երկրի վաճառականութեան համար նոր դաշտեր, մրցութեան նոր ասպարէզներ բանալու համար և մանաւանդ երկրի օրաւուր աճող ազգաբնակութեան աւելցուկին տեղ և ապրուստ մի քիչ ոյժներ մատակարարելու համար. մանաւանդ այս վերջին տեսակէտից Գերմանիան բաւականին նեղված է. ամեն տարի ազգաբնակութիւնը աւելանում է մօտ 800,000 հոգով, այս հսկայական աճումին ներկայ ժամանակներում բաւականացնել կարող են մանաւանդ կալօնիաները, ուստի և Գերմանիան ստիպված է մղվելու աշխարհի այն մասերը, ուր բուն դնել և որը դաւթել կարելի է։

Կուլտուրական երկիրները գրաւելով կալօնիաներ՝ մի մեծ պատասխանատուութիւն էլ պէտք է իրանց վրա վերցնեն, այն է՝ տեղական անկիրթ և կիսավայրենի ժողովուրդների զարգացման գործը, նրանց՝ կուլտուրայի բարիքները վայելելու կարողութեանը հասցնելու հոգսը, մի բարոյական պարտք, որը միանգամայն մոռացել էր Գերմանիան։ Գերմանացի վաճառականները, կապիտալիստները, կալօնիստները, իշխանաւորները ամեն կերպ ճնշում, նեղում էին տեղացիներին, նոյնիսկ սովամահութեան հասցնում. կարծես ամեն կերպ աշխատում էին ոչնչացնել նրանց։ Այս ճնշումները, հարստահարումները այնտեղ հասան, որ ընակիչները չը կարողանալով դիմանալ այդ բոլորին 1904 թ. յունվարին ապստամբութեան դրոշ բարձրացրին, որը տևեց մօտ երեք տարի և միմիայն այս վերջերս է կանոնաւորապէս ճնշվել ապստամբութիւնը, որը Գերմանիային բաւականին մարդային զոհեր և ֆինանսական մեծամեծ ծախսեր պատճառեց։ Թողնելով այն գազանութիւնների մասին խօսելը, որոնք բաւականին մեծ չափերով գործադրվել են այդ ապրստամբութիւնը ճնշելու ժամանակ, անց նենք այն ծախսերին, որը Գերմանիան 1884 թ.-ականից մինչև 1907 թ. գործադրել է այդ գաղութների վրա։

Կառավարչական ծախսեր	835,525,29	մարկ,
Կիսօտուրի ծախսերը	111,153,650	»
Հերեբոյների կռիւը	490,600,314,28	»
Արևելեան Աֆրիկայի ապատամբ.	1,919,450	»
Արևելեան Աֆր. հեռախօս	1,973,971,06	»
Կուլտուրայի և վաճառական համար	2,251,404,29	»
Էքսպեդիցիաների և ուրիշ այլ զանազան ծախսերը մօտ	1½ միլիարդ մարկ։	
Բոլորը	1,475,435,083,58	»

Այս հսկայական ծախսերը կլանող կալօնիաները այնպիսի զգալի օգուտներ չեն տալիս, որպէսզի ժողովրդի մի մեծ մասի զգոհութիւնը մասամբ թուլանայ, որ միանգամայն յոգնել է միշտ մեծամեծ անպտուղ ծախսերը տեսնելուց, ուստի և դժգոհ է պետութեան կալօնիալ-պոլիտիկայի։ Պետութիւնը ի հարկէ դեռ յուսահատվելու տրամադրութիւն չունի, ուստի այս վերջին բայխստագին առաջարկել էր տերունական ելքերի մէջ մտցնել 29,200,000 մարկ Աֆրիկայի կալօնիաների, տեղական գործերի և դեռ այնտեղ մնացող գնդերի համար։ Ահա այս առաջարկն է, որը բայխստագի լուծման պատճառը դարձաւ։

Ցենտրումը (կենտրօնը), բայխստագի ամենաուժեղ և յետադէմ կուսակցութիւնը, առաջարկում է նշանակել միմիայն 20,288,000 մարկ և մինչև մայիսի 1-ը կալօնիաներում եղող զօրքի թիւը իջեցնել 2500-ի և մնացածներին յետ կանչել։ Ուրեմն մի առաջարկ՝ հիմովին հակառակ տերութեան ցանկութեան և պլաններին։

Ժողովրդական ազատամիտ պարտիան մի միջին ճանապարհ է ընտրում. ընդունել պետութեան առաջարկը փոքր վերաբերմամբ. բացի այն 4000 զինուորներից, որոնք շուտով վերադառնալու են, մինչև 1907 թուականի մայիսի 1-ը աւելի ու աւելի քչացնել զօրքերի թիւը նայած կարիքներին և խաղաղութեան չափին։

Բուէարկութիւնից յետոյ երևում է, որ պետութեան առաջարկը մերժվում է 178 ձայնով ընդդէմ 168-ի. իսկ 176 ձայնով ընդդէմ 171-ի մերժվում է ազատամիտ կուսակցութեան առաջարկը։ Այս որոշումներից յետոյ պետութեան պլանները ջախջախված տեսնելով՝ Բիւլովը կայսրի հրամանով լուծում է բայխստագը, պատասխանելով որ ընդունել ցենտրումի առաջարկը՝ նշանակում է ձեռք քաշել Աֆրիկայի կալօնիաներից և պատճառ դառնալ նորանոր ապստամբութիւնների, մի բան՝ որին չէ կարող ձայնակցել գերման ժողովուրդը։

Ցենտրումի այս վերաբերմունքը շատերը նրանով են բացատրում, որ տեսնելով այն հսկայական ծախսերը, որ գործադրվել է կալօնիաների համար, և այն չնչին հետևանքները, որոնց հասել է տերութիւնը, չէին կարող համաձայնել տերութեան նոր պահանջներին, որը կուսակցութեան թուլացման պատճառ վնել կարող էր։ Ինչ որ էլ լինի, փաստը այն է, որ բայխստագի լուծման պատճառը ցենտրումն էր՝ ձայնակցութեամբ սոցիալ-դեմոկրատների և 17 լեհ պատգամաւորների։

Շատ թերթեր տերութեան այս կարուկ վերաբերմունքը նրանով են բացատրում, որ նա, մանաւանդ վերջերս հասկացել էր, որ ցենտրումի վրա մշտապէս յենվելը մի զժուարին խաղ է. տերութիւնը, որը շատ անգամ ստիպված էր ցենտրումի գծած ուղով ընթանալ, ուզում է ազատվել ցենտրումի ճանկերից և նրա ըէակցիօնէր ազդումներից։ Ցենտրումի օրգան «Germania»-ն նոյնպէս նկատում է, որ փակման գլխաւոր պատճառը ոչ թէ կալօնիաների հարցն էր, այլ որ տերութիւնը ուզում է մի կերպ ազատվել ցենտրումի ազդեցութիւնից։

Ինչ որ էլ լինի տերութեան մտադրութիւնը, սակայն փաստ է, որ ապագայ բայխստագը աւելի ազատախոհ և ձախ թևերից է կազմված լինելու, որը ի հարկէ իր բարերար նշանակութիւնը կունենայ գերմանական և միջազգային կեանքի համար։ Մինչև օրս բայխստագում ոտն տուողը ցնտրումը էր, որը Գերմանիայի քաղաքատնտեսական կեանքի վրա իր սև դրոմն էր դրել, իր գոյնովն էր ներկել կրթական և այլ կուլտուրական գործերը։ Ժողովուրդը յոգնել է այդ դառնութեան բաժակը տանելուց. նա տեսնում է, թէ այդպիսի ընթացքն, ինչպէս երկիրը տանում է դէպի քաղաքական կղզիացում, որը կարող է աղէտաբեր դառնալ իր համար, ուստի և ընտրութիւնների միջոցով, որի պայքարն արդէն սկսվելու վրա է, ցոյց կը տայ, որ իրան այլ ոգի ունեցող բայխստագ է հարկաւոր, քան մինչև օրս է եղել։

Գ. Էդ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ԴԱՆԻԱ

Բալտիկ ծովի փակումը.—Վիլհելմ կայսրի քաղաքականութիւնը վերջերս մի փառաւոր յաղթանակ տարաւ Հիւսիսային Եւրոպայի պետութիւնների և Ամերիկայի Միացեալ-Նահանգների վրա՝ կատարելապէս յանկարծակիի բերելով նրանց։ Բանն այն է, որ Գերմանիան Դանիայի հետ դաշն է կռել Բալտիկ ծովը փակելու համար գերմանական կայսրութեան թշնամի պետութիւնների նաւատորմիղների առաջ։

Դանիայի մատուցած այս ծառայութեան փոխարէն՝ Գերմանիան երաշխաւորում է այդ փոքրիկ պետութեան ամբողջութիւնը, միևնոյն ժամանակ ազատելով նրան զինուորական ծովային ու ցամաքային ոյժեր պահելու այնպիսի դժուարութիւններից, որոնք դանիական փոքրիկ պետութեան նիւթական կարողութիւնից շատ բարձր էին։ Մինչև այժմ Դանիան գրեթէ 100,000 զինուոր էր պահում և որոշ ոյժ ներկայացնող մի նաւատորմ ունէր։

Գալով Գերմանիային, գերմանօ-դանիական այս դաշնակցութիւնից նա անհաշիւ օգուտներ ունի։ Պատերազմի ժամանակ եթէ Բալտիկ ծովը փակվի, այդ դէպքում Անգլիայի, Ֆրանսիայի կամ որևէ թշնամի պետութեան նաւատորմիղները չեն կարող թնսել գերմանական կայսրութեանը։ Բալտիկ ծովի հարաւային ափերը, որոնք Գերմանիայի ամենից տրկար կողմն էին ներկայացնում, անառիկ մի գիրք են ստանում այսպիսով։

Այն հանգամանքը, որ Բալտիկ ծովի բանալին Գերմանիայի ձեռքն անցաւ,—Ռուսաստանին զրկում է գերմանական կայսրութեան դէմ պատերազմ մղելու բոլոր հնարաւորութիւնից։ Ռուսաստանի նաւատորմը, որի Սև ծովի նաւաբաժինը կաշկանդված է այդ ծովում, այդպիսով դատապարտվում է խեղդվելու. Բալտիկ ծովում, և ֆրանսիական նաւատորմիղը այլ ևս չէ կարող օգնութեան հասնել նրան։

ԹԻՒՐԳԻԱ ԵՒ ԲՈՒԼԳԱՐԻԱ

Համակրական զգացումներ երկու կառավարութիւնների միջև.—Բուլգարական թերթերի հաղորդած տեղեկութիւնների համաձայն, օսմանեան կառավարութեան դիւանագիտական ներկայացուցիչը Սոֆիայում անցեալ նոյեմբերի կիսերին այցելութիւն է տուել բուլգարական արտաքին գործերի մինիստր Ստանչովին և մեծ-վեզիրի անունից թիւրք կառավարութեան գոհունակութիւնն է յայտնել նրան այն բանի համար, որ Ստանչովը վերջերս սօբրանիէում (բուլգարական պարլամենտում) յայտարարել է արտաքին քաղաքականութեան վերաբերմամբ իր բռնելիք կօրրեկտ ընթացքը, որը չէ հակասում Թիւրքիայի շահերին։ Թիւրք կառավարութեան ներկայացուցիչը միևնոյն ժամանակ խոստացել է, որ Թիւրքիան գործնականապէս էլ պէտք է ապացուցնէ Բուլգարիայի նկատմամբ իր ունեցած բարեացակամութիւնը։

Երևի օսմ. կառավարութեան ներկայացուցչի արած խոստումն արդարացնելու համար էր, որ սուլթան Համիդը տիեզերական պարիրքի՝ Բայրամի ափոթով ներկայացրած ուղերձին մերժողական պատասխան է տուել։ Ցուցաց պատրիարքն իր այդ ուղերձով խնդրում էր Աբդուլ-Համիդին, որ միջոցներ ձեռք առնէ բուլգարներից յետ ստանալու նրանց՝ վերջերս Բուլգարիայում գրաւած յունական եկեղեցիները։ Եկեղեցիների այդ գրաւումը բուլգարների կողմից, ինչպէս և այն անգամ ու բարբարոսական յարձակումները, որոնց վերջերս ենթարկվեց խաղաղ յոյն ազգաբնակութիւնը Բուլգարիայի զանազան կէտերում,—ներկայանում են որպէս արձագանք այն անողոք կռուի, որ ներկայումս մղվում է Մակեդոնիայում յոյն և բուլգար ազգաբնակութիւնների միջև՝ այդ երկրում գերակշռելու ձեռք բերելու համար։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Անցեալ Պարսկաստանում։ Անգլիական լրագիրները մեծ աղմուկ են բարձրացրել։ Այդ լրագիրները հաղորդում են, որ շահի առողջական դրութիւնը անյուսալի է, իսկ գահաժառանգը, ինչպէս ասում են, սահմանադրութեան բացարձակ թշնամի է։ Պարսկական պարլամենտը վերին ատիճանի ընդդիմադիր ոգով է տրամադրված, և նրան արձակելը կարող է գինված ընդդիմադրութեան պատճառ դառնալ։ Անգլիական լրագիրների ասելով, այդ խռովութիւնը թերևս Պարսկաստանի բաժան-բաժան լինելու պատճառը հանդիսանայ։ Ուստի, «Times»-ը դեկտեմբերի 4-ի համարում կոչ է անում անգլիական և ռուսաց կառավարութիւններին՝ գործել միասին, մինչև միւս օրը «Pail Mail» ազդեցիկ լրագիրը խիստ և ամողջ յարձակում է ռուսաց գործակալների ինտրիգների վրա և պահանջում է, որպէսզի անգլիական կառավարութիւնը աչալրջութեամբ հետևէ Պարսկաստանում կատարվող դէպքերին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

13 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 դեկտեմբերի։ Բանուորների տրամադրութիւնը հանգիստ է։—Նահանգական զեմստվոյի հերթական նիստում ձայնաւոր Մենշուտկինը հարց է յարուցում՝ միջնորդել ուր հարկն է Պետերբուրգի նահանգի արտակարգ պահնորդութիւնը վերացնելու համար, քանի որ մօտենում է Պետական Դումայի ընտրութիւնների ժամանակը։ Ժողովականների ժեծ մասը 18 ձայնով ընդդէմ 11-ի մերժել է այդ առաջարկը։

ԿԻԵՎ, 13 դեկտեմբերի։ Կարճատև հիւանդութիւնից յետոյ դեկտեմբերի 12-ին վախճանվեց պրոֆեսոր Կոնօվալովը։

ԿԱՄԵՆԷՑ-ՊՕԴՕԼՍԿ, 13 դեկտեմ.։ Կամէնսկի գաւառի Բէպինց գիւղի գիւղացիները շէնական ժողովում որոշել են ընել «ռուս մարդկանց դաշնակցութեան» բաժին։ Հաւանաբար բոլոր գիւղացիները անդամներ են գրվել։

ԼՕԶ, 13 դեկտեմբերի։ Կուսակցական հողի վրա կատարվող յարձակումները և սպանութիւնները շարունակվում են։

ԼԻԲԱՒ, 13 դեկտեմ.։ Լիբաւայում, մօտ օրերս գիւղացի Հիւնտերի ձեռքով վիրաւորված Յակոբ Դօբելը հարցաքննութեան ժամանակ մատնանշել է թաղային վերահսկիչ Կրիվօնօսովի մարդասպանին և մատնել է Ռիգայի յեղափոխական կենտրօնական կոմիտէի տեղը և Լիբաւայի այդ կոմիտէի անդամներից մի քանիսին։ Կատարվում է քննութիւն։

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ, 13 դեկ.։ Սև ծովեան նաւատորմիղի գլխաւոր հրամանատարը ծովային դատարանի հետ համաձայնութեան գալով պատերազմա-ճովային դատարանին է յանձնել «Տերէց» նաւամարտիկի բոլոր օֆիցերներին, որոնք մինչև դատապարտվելը հեռացված են իրանց պաշտօններից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 դեկտեմբ.։ Զինուորական խորհրդի անդամ Թիւրքեստանի նախկին գեներալ-նահանգապետ գեներալ-լեյտենանտ Սուբբոտիչը պաշտօնարկ է լինում։

ՄՕՍԿՎԱ, 13 դեկտեմ.։ Մօսկվայի փոխադարձ վարկի ընկերութիւնը կողոպտող Բէլէնցօվը յանձնվելու է երդուեալ դատաւորների դատարանին։

14 դեկտեմբերի

ՐԻԳԱ, 13 դեկտ.։ Պատերազմա-դաշտային դատարանը հեռանդով գործում է։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 դեկտ.։ Մօսկվայի զանազան թաղամասերում կայացել են հոկտեմբերականների ժողովները կադէտների վիճաբանութիւններով. խօսել են Բաժէնովը, Կոկօշկինը և պրոֆէսսոր Կիզեվետտերը։ Վիլնայում բացվել է հոկտեմբերականների բաժին։

Իվանօվօ-Վոզնէսենսկում դեկտեմբերի 27-ին կայանալու է միապետական կուսակցութիւնների համառուսական համագումարը։

ԲՐԵԱՆՍԿ, 13 դեկտ.։ Նիստի ժամանակ ձերբակալված է յեղափոխական պրոպագանդիստների կօմիտէն։

ԿԱՄԷՆԵՑ-ՊՕԴՕԼՍԿ, 13 դեկտ.։ Գիւղերում բացվում են «ռուս ժողովրդի դաշնակցութեան» բաժիններ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 դեկտեմբերի։ Ռևևարի մինիստրը մինիստրների խորհրդ՝ն ներկայացրել է մի առաջարկագիր, որով խնդրում է թոյլատրել իրան մանաւոր անձանց ձեռքը յանձնել կովկասեան հանքային ջրերից ստացվող նիւթերը այն պայմաններով, որ կորոշեն տուեարի և արդիւնաբերութեան, ֆինանսների մինիստրները և պետական կօնտրօլիօր։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 դեկտեմբերի։ Լրագրային այն լուրերը, որ իբր մինիստրների խորհուրդը հրամայել է ընտրութիւնների ամբողջ ժամանակ փակել բոլոր բարձր կրթական հաստատութիւնները, միանգամայն մտացածին են։

ԱՍԽԱԲԱԴ, 13 դեկտեմբերի։ Պետական կալուածների վարչութեան գանձապահի վրա մի խումբ չարագործներ կողոպտման նպատակով յարձակում են գործել։ Գանձապահը սպանվել է, ուղեկցող կօզակներից մէկը վիրաւորված է, իսկ միւս կօզակը և հասարակութիւնը խանգարել են կողոպտման։ Մարդասպաններից մէկը վիրաւորված է և բռնված է. մնացածները փախել են։

ՊԷԿԻՆ, 13 դեկտեմբերի։ Գաւառում սովը ընդարձակ չափեր է ընդունում։

ԽԱՐԿՕՎ, 13 դեկտեմբերի։ Երեկոյեան ժամը 8 և 50 րոպէին կայարանում շատ ուժեղ պայթում տեղի ունեցաւ, որի ծուխը պատեց ամբողջ կայարանը. կրակը երևաց մեծ տարածութեան վրա. դռները իրանց ծխնիներից (петля) պոկվեցին. շատ պատուհանների ապակիները ջարդվեցին։ Ըստ երևոյթին, այն ճանապարհորդը, որի մօտ է եղել ռումբը, կտոր-կտոր է եղել։ Սպանվեց մէկը, ծանր վիրաւորվեցին մի կին և բեռնակիրներից մէկը. թեթև վիրաւորվեցին 8 բեռնակիրներ (носильщики)։ Շատ վիրաւորվածներ սարսափով կայարանից փախան։ Ջերբակալված են մի քանի կասկածաւոր անձինք։ Ընդհանուր տպաւորութիւնը ցնցող է։

ԼՕՆԴՕՆ, 13 դեկտեմբերի։ «Դէյլի Մէյլ»-ին թէհրանից հաղորդում են, որ պարլամենտի մշակած սահմանադրութեան նախագիծը նախատեսնում է, որ պարլամենտի ընդունած օրէնքագիծերը ներկայացվում են բարձրագոյն իշխանութեանն ի հաստատութիւն առաջին մինիստրի միջոցով։ Գահաժառանգ պրինցը առաջարկել է ձեւափոխել նախագիծը, հաստատելով պարլամենտի ընդունած օրէնքագիծը քննելու համար մի յատուկ խորհուրդ 30 մարդուց բաղկացած, որոնց պէտք է նշանակել այսպէս.—20 հոգի պարլամենտի կողմից և 10-ը Շահի պալատից։ Այս առաջարկը մեծ վրդովմունք է յարուցել պարլամենտում. վիճաբանութիւնները շարունակվել են ամբողջ օրը և հաւանօրէն կը շարունակվեն ամբողջ գիշերն էլ։ Ենթադրում են, որ եթէ գահաժառանգը կը շարունակէ պնդել իրանը, այն ժամանակ պարլամենտը Նորից կը փակվի։

ԴԱՆԶԱԿ, 13 դեկտեմբերի։ Պետական Դումայի ընտրութիւնների հարցով զբաղվող տեղիս գաւառական մասնաժողովը ընտրողների ցուցակից հանել է Պետական Դումայի նախկին անդամ Զիաթխանովի անունը, որը ներկայումս քննութեան տակ է Վիբորգի կոչը ստորագրելուն համար։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵՈՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
ամեն օր, բացի կիրակի օրերի
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՅՈՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վեներական (սիֆիլիս) միզասեռ. հ.։
Կ. Մ. ԶԻՆՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Մ. Դ. ԱՒԵՏԻՍՅԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական և վիրաբուժու. իւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ի. Դ. ԳԶՆԼԻՆՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՁՆԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։
Գ. Ե. Գուրզինով—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐ՝
Ա. Մ. ՓՈՂԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և ծոցկնատ.։

Վճարը 50 կ.։ Հիւանդները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

Ախալցխայի հայոց երկսեռ դպրոցների համար հարկաւոր է ուսուցչական

ԻՆՍՏԻՏՈՒՏ կամ ՍԵՄԻՆԱՐԻԱՆ

աւարտած ռուսաց լեզուի համար

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ

շաբաթական 24 դասով

դասագինը 30 ռուբլի

Ռոճիկը կը վճարվի պաշտօնը ստանձնելու օրից։ Դիմել Ախալցխայի հայոց երկսեռ դպրոցների հոգաբարձութեան։

Նախագահ հոգաբարձութեանը։
Սեդրակ Աղամեանց
Քարտուղար՝ Ճղմաճեանց

(Ա. Հ. 2.) 1—5

Դեկտեմբերի 1-ից անյայտացել է իմ միակ որդին, 15 տարեկան, գիմնազիստ աշակերտ ՆԻԿՈԼԱՅԸ. խոնարհաբար խնդրում եմ այն յարգելի պարոններին, որոնք գիտեն նրա տեղը կամ տեսել են նրան պատահմամբ, յայտնել ինձ այս հասցէով. Екатеринодаръ, Борзиковская № 63, Александру Айвазову.

1—1

Տօնական նուէր պատանիներին
Յարութիւն Կասյանի

„ՀԱՅ ԿՏՐԻՃՆԵՐԸ“

Պատկեր հայ-թուրքական կռիւներից
Գինն է 7 կօպէկ

Գրավաճառներին և գումարով գնողներին ոբոշ զեղչ։ Դիմել Թիֆլիս «Գուտտենբերգ» գրավաճառանոցը։ 1—5

Լոյս տեսաւ
Երկրորդ տպագրութեամբ
Մօսկվայի քաղաքային դպրոցների ուսուցիչների կազմած եւ
Աբրամ Սպարապետեանի փոխադրած

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ամբողջ և անուսական թւերով հազարի շրջանում, ուր խնդիրները դասաւորված են տեսակներով (գ. տարի)։

ԳԻՆՆ Է 30 ԿՕՊԷԿ

Դիմել՝ «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» գրախանութիւն, Թիֆլիս։ Նոյնտեղ ծախվում են նոյն փոխադրողի և նոյն հեղինակների՝ ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ԵՒ ՕՐԻՆԱԿՆԵՐ ա. և բ. տարի, նոյնը դ. տարի, երկրորդ տպ., գինն է 30 կ.։ Դուռմարով առնողներին զեղչ։

Մամուլի տակ է ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ կոռորակ բեռով pus Շապշինկովի եւ Վալցովի։

(Ա. Հ. Կ.) 1—3

ՀԱՐԿԱՒՈՐ է

Ղզլարի հայոց ծխական դպրոցների համար երաժշտական պատրաստութեամբ մի հմուտ երգեցողութեան

ՈՒԱՍՈՒՑԻՉ

20 դասով, որը պիտի պատրաստէ նաև եկեղեցական քառաձայն խումբ և վարէ խմբապետի պաշտօնը։ Ռոճիկը յունվարի 1-ից մինչև յունիսի 15-ը 500 ռուբլի։

Ի դիմաց հոգաբարձութեան՝
Մ. Մոլթանեան

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ

Մանկավարժական խորհուրդների որոշմամբ առաջիկայ յունվար ամսին նոր աշակերտների ընդունելութիւնը չէ լինելու՝ դասարանները չափազանց լցված լինելու և տեղ չը լինելու պատճառով։

Դպրանոցի վերատեսուչ՝ Ս. Տիգրանեան
(ու. կ. ե.) 1—3

ՄԷՇԵՐԻՆԱԿ-ՊՕԴՎՕՐ

Մօսկվա իլինկայումն

Նոր կահաւորված 120 համարից ելեքտրական լուսաւորութիւնով նոր մեքենայ բարձրանալու,

ՄԱՏԶԵԼԻ ԳՆԵՐՈՎ

Ամենայն յարմարութիւններով։
Հ. ու. 7—8

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՄԽԻԹԱՐ ՎԱՐԴԱՊԵՏԻ

„ՀԱՅԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ“

գիրքը հետևեալ բովանդակութեամբ։
Ռուսաստանի լուս. հայոց վանքական անշարժ կալուածները։ Տեղեկագիր Ա, Բ, Գ, Դ, 1904 թ.։ Ռուսաստանի լուս. հայոց ծխական եկեղեցիների անշարժ կալուածները։ Մ. Էջմիածնի 1906 թուի նախահաշիւը։ Մ. Աթոռի տարեկան միջին մուտքը 1897—1901 թուերի հնգամեայ շրջանում։ Վիճակային և օտարային արդիւնք։ Մ. Աթոռի դրամագլուխը և տանդաղարները։ Հայերը Ռուսաստանում ըստ 1897 թուի առաջին ընդհանուր աշխարհագրի։

ԳԻՆՆ Է 80 ԿՕՊԷԿ

Դիմել ս. Էջմիածին՝ Մխիթար վարդապետին. Թիֆլիս՝ Գուտտենբերգ և կենտրոնական գրավաճառանոցներին։
(Հ. ու. Ե.) 1—3

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Կիրակի, դեկտեմբերի 17-ին նշանակված է

ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ

Ընդհանուր հիմունքներով։
1—3

Открыта подписка на 1907 годъ
На общественную литературную и политич. ежедневн. газету

„КАВКАЗСКАЯ РѢЧЬ“

Газета «Кавк. Рѣчь» выходитъ въ Тифлисѣ каждый день, кромѣ дней послѣ праздничныхъ «Кавк. Рѣчь»—газета внѣпартійная, независимая прогрессивная.
Въ «Кавк. Рѣчи» помѣщаются иллюстраціи къ событіямъ дня, портреты обществен. и государствен. дѣятелей и Каррикатуры художниха О. И. Шлинга.
подписная цѣна: Въ Тифлисѣ—1 годъ—6 руб., полгода —3 р., четверть годъ — 1 р. 75 к. | 1 м—60 к

Въ розничной продажѣ въ Тифлисѣ отд. «№ К. Рѣчи» ТРИ КОП.

Въ другіе города: 1 годъ—7 руб., полгода—3 руб. 50 коп., четверть годъ—2 р., 1 мѣс. 75 к.
За границу: 1 годъ—10 руб., полгода 6 руб., четверть годъ—4 руб.

Подписавшіеся теперь же на весь 1907 годъ или на 6 мѣсяцевъ получаютъ газету со дня подписки до 1-го января тек. года Безплатно.
Для годовыхъ и полугодовыхъ подписчиковъ **разсрочка:** при подпискѣ 2 р. и послѣ каждый мѣсяцъ по 1 рублю.
Сельскія и дешезвыя библіотеки, благотворит. учрежденія, учащіеся, сельск. учителя и учительницы, рабочіе пользуются 10 проц. скидки съ подписной цѣны при непосредств. обращеніи въ главн. контору. Въ кредитъ и налож. платежомъ газета не высылается.
Подписка принимается въ главной конторѣ изданія: Тифлисъ, Кворцовая улица, домъ Грузинскаго Дворянства. ред. изд. М. Джабаръ 1—2

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1907 Թ.

ԱՇԽԱՏԱՆՔ

Ժողովրդական, տնտեսական, գիւղացիական
ԹԱՐԹԹԵՐԹ
(ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)

Նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ, ինչ որ 1906 թուին, աշխատակիցների ուժեղացրած կազմով. ամեն համարում Ստորագրեալ ծիրանեան շաբաթական թերթեր։

«Աշխատանքը» նուիրված է լինելու հայ գիւղացիութեան և նրա միջից դուրս եկած պրոլետարիատի շահերին և կարիքներին։
«Աշխատանքը» առանձին ուշադրութիւն է դարձնելու մեր գաւառի հասարակական և տնտեսական կեանքի վրա։
1907 թուի տարեկան բաժանորդներին «Աշխատանքը» տալու է ձրի, բացի 50 համար թերթից, բաղկացած 800 երկնալ, մեծագիր երեսներից, հետևեալ չորս գրքերը.

Տարին 4 ր.

1. «Ժողովուրդը և հողը» տնտեսական-հասարակական ուսումնասիրութիւն։
2. «Ամենապատ վարը» մասնչի գիւղատնտեսական ցուցմունքներ։
3. «Թանկագին բոյսերի թշնամիները եւ նրանց դէմ կռուելու միջոցները», հանրամատչելի գիտական ուսումնասիրութիւն այգեգործների, պարտիզպանների և բամբակագործների համար։
4. «Գիւղական նամակներ» զրոյցներ ժամանակակից քաղաքական-տնտեսական-հասարակական հարցերի մասին։

Բացի դա բաժանորդները ձրի ստանալու են՝
Երկու բազմագոյն, շքեղ նկարներ (14×8 վերշ.)
I «Կարկուտից յետոյ» (կուզարկվի յունվարի 15-ին)
II «Գալիս են» (կուղարկվի սեպտ. 15-ին)
ԲԱԺԵՆԵԳԻՆԸ

Գրքերի և նկարների հետ միասին ճանապարհածախքով

Ռուսաստանի համար	Արտասահմանի համար
Տարին . . . . . 4 ր.	Տարին . . . . . 18 ֆրանկ.
Կէս տարին . . . . 2 ր. 50 կ.	Կէս տարին . . . . . 10 »

Հասցէն՝ Тифлисъ, редакцію журн. «Ашхатанкъ» Бебутовская № 56.
6—0 Խմբագիր-հրատարակիչ՝ Ա. Աթանասեան

ԵՐԿՐՈՐԴ ԵՒ ՎԵՐՋԻՆ ԺՈՂՈՎ

Կիրակի, դեկտեմբերի 17-ին, պատարագից յետոյ առաւօտեան ժամը 11½-ին, Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցում նշանակված է ծխական ժողով լսելու՝
Ծխական հոգաբարձութեան միամեայ հաշիւը։
և քննելու՝
1) Հոգաբարձութեան առաջարկութիւնը ս. Մարիամեան դպրոցի գոյութիւնը ապահովելու և
2) Ապագայում ծխական ժողովները հրաւիրելու հարցը կանոնաւորելու մասին։
Սրանով Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցուն պատկանող 21 տարեկանից բարձր բոլոր ծխականները—վերնափառ կաթողիկոսի կանդակների համաձայն—առանց սեռի և դասակարգի խտրութեան հրաւիրվում են մասնակցելու այդ ժողովին։
Ի դիմաց ծխական հոգաբարձութեան՝
Երեցփոխ Ստ. Մնացականեան
(ու. շ. կ.) 1—3

ԴԵՐՁԱԿՈՒՇԻ

ընդունում եմ կանանց և երեխաների զգեստների պատուէրներ վերջին տարազով։ Պատուէրները կատարվում են շուտ, ճաշակով և արժան։ Ներսիսեան փողոց 9. Թումանովի № 2։
2—4 (Հ. ու. կ.) ԻՄՆԱՁԷ

ԲԱԶՄԱՎԵՊ

Հանդէս ս. Ղազարու Հայկական ճեմարանի իր 64-րդ տարւոյն մէջ, հ